



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օբյեկտը առևա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lienchi Uftangtjue

Zug Sonnappgung
hupwam pmeelop
uperwam aitjue am

Uruyam

1928

262

ՀԱՐԵՆ ՍԻՐԱՑԵԼԱՆ

ՀԱՅ ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

ԿԾԱՀԿԵՐ, ԿԾԱՀԿԵՐԸ ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՅԵՒ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԳՈՒԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅՈՍԱՇԽԱՏ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՑՅՈՒՆ

ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴՅԱԿԱՆ
ՀԱՐՍՈՒԻԹՅՈՒՆՆԵՐՆ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

(Կոտակներ, նվիրատվություններ և հասարակական գումարներ)



Մ Ա Ա Կ Վ Ա
= 1928 =

НАРЕН МИКАЭЛЯН

АРМЯНСКИЕ НАРОДНЫЕ БОГАТСТВА
ЗАГРАНИЦЕЙ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Հայ ժողովրդին պատկանող հասարակական հարստություններն արտասահմանում կարելի է յ' ընք տեսակի բաժանել:

1.— Գումարներ, վորո՞ք միում ևն բարերարների մահից հետո իրավունք ձեռվ։

2.— Գումարներ, վ' ըս' ք հատկացրված են վորոշ բարեգործական նպատակների նշյալուսիւժյուն ձեռվ։

3.— Գումարներ, վորո՞ք գտնվում են գանազան հասարակական կազմակերպությունների արամազրության տակ։

Բոլոր այդ գումարների քանակը այսոր անցնում է տասնյակ միլիոն ռուբլուց։

Խոր, Հայաստ, ներկաս անտեսական կացության և նրա առաջազրած ծրագրների հետ հարաբերելով, անկատկած դա մի խոշոր հարստություն է, հասարակական մի մեծ ֆոնդ, վորի նպատականարժար և շուտափություն դործագրությունը պիտի լինի որվա հաստապ խնդիրներից մեկը։

Թէ Խոր, Հայաստանի և թէ արտասահմանի մամուլը վերջերս շատ զբաղվեց զրանով։

Ամփոփի գաղափար առալու համար, թէ վորո՞ք են այդ գումարները, ում արամազրության տակ են գտնվում, ի՞նչ նպատակների են հատկացրված և ի՞նչու չեն զործագրվում, մենք կը բերենք ստորև զբանց սիստեմատիկ

ցանկը՝ վաստական տվյալներով, այն չափով, ինչ չափով
մեզ հաջողվեց իրագեկ լինել, իրրե հայաստանի Աղնու-
թյան կոմիտեյի և Կարմիր Խաչի Պատվիրակության ան-
դամ, արտասահմանում կատարած մեր ծանալարհորդու-
թյան ընթացքում:

Պակաս չափով չաջակցեց մեզ և Կառակների Ռւսում-
նասիրության Հանձնաժողովը» Յերեանում, վոր սիրալիր
կերպով հնարավորություն տվեց մեզ ծանոթանալու իր
տրամադրության տակ յեղած նյութերի հետ:

Ի հարկե, այս ցանկը չի կարելի լրիվ համարել և
վոչ ել, վորոշ դժվարությունների պատճառով, հավասա-
րաչափ կերպով ուսումնասիրված, համենայն զեպս հա-
սարակական բնույթի կրող եական դումարները այստեղ
հիշատակված են:

Սկսենք կառակներից:

Ա. Կ Տ Ա Կ Ն Ե Ր

1. ՍԱՆԱՍԱՐՅԱՆԻ ԿՏԱԿԸ

Այս կտակը ըստ ժամանակադրական կարգի հնագույն
կտակներից մեկն է:

Նոր գրված և 1886 թ. հուլիսի 10-ին, Ա. Պետեր-
բուրգում (այժմ Լենինգրադ), պաշտոնաթող սպա Մկրտիչ
Սարգսյան Սանասարյանի կողմից:

Կտակը, վոր ներշնչված և ժամանակին հայտնի
պատմաբան և հասարակական գործիչ Կարապետ Յեղյանի
կողմից, սկսվում է այսպես:

«Ծագմամբ Տաճկահայ լինելով և ըստ կարյացս կա-
մենակով ոժանգակել կրօնակից համազդիներիս բարորու-
թյան... յես թե Ռուսաստանում և թե արաւասահմանում
իմ մահվան բողեյին բոլոր մնացյալ ստացվածքս... կտա-
կում եմ ի շինություն և պահպանություն հայերի համար
իմ հիմնարկած և անունո կրող վարժարանին, վոր գտնվում
ե այժմ կարին քաղաքում»:

Ցեղ այսուհետեւ կտակի 9-րդ հոդվածում ավելա-
ցնում է.

«Ցեղե Հայոց համար կարին հիմնած վարժարանիս...
հարատեհելու արգելք բերող խոչընդուներ առաջ գան,
իրավունք եմ ապիս կտակակատարներիս վոխադրել իմ
անվան վարժարանը մի ուրիշ հայալինակ տեղ հին Հա-

յաստանի սահմաններում, վորպեսզի նա չարունակե դարգանալ սույն կտակում՝ նախակված սկզբունքների համաձայն:

Երբեք կտակակատարներ Մ. Սահմասարյանը կարդում ե հետեւյալ անձերին՝ կարապեա Յեղյ. Նին, Գեղորդ Յեղանգույցանին և բժ. Լեվոն Տիգրանյանին:

Զորս տարի հետո Սահմասարյանը, 1890 թվի մայիսի 19-ին, վախճանվում է:

Կտակի թելազրության համա այն կարապեա Յեղյանը մշակում և Սահմասարյան վարժարանի «Հիմնական կանոնազրությունը», վեր ուղար և տեսնում 1892 թվին:

Այդ կանոնազրության համար հիմնական կետերը Սահմասարյանը հիշատակել եր արգեն իր կտակի մեջ, թողնելով, վոր Յեղյանը, այնուհետեւ, ական մականակ կերպով, յերեաւ հանե իրեն մնայուն կանոնազրության:

Այդ հիմնական կետերից կրերենք մի քանիսը.

ա). Վարժարանը զրվում է օմնայն Հայոց կաթողիկոսի հովանավորության ներքո:

բ). Վարժարանի կայքերն ու անտեսական մասը կտակալութեա համար ողիտի կազմվի մի հոգարարձական խորհուրդ, վար բառ կանոնազրության պիտի բաղկացած լինի 6 ողոլուարնեակ հայերից, նախազարհությամբ Հայոց կաթողիկոսի փոխանորդով համարվող կ.-Պոլսի Պատրիարքի:

գ). Հոգարարձական խորհուրդը, կամ կ.-Պոլսի խնամակալությունը, յուրաքանչյուր տարի պիտի հրատարակի վարժարանի զրության, նրա կայքի, մտից և յելից աեղեկազիրը:

դ). Էկթե վարժարանի միջոցները թույլ տան կարելի ե ոժանուակություն տալ՝ ուրիշ հայորհանկ տեղերում վարժարաններ հիմնելու համար:

ե). Իր կտակակատարների յերկուսի մահից հետո

վարժարանին պատկանած անշարժ կայքերն ու տոկոսաբեր թղթերը չեն կարելի ոտարացնել, զրավ դնել և վոր և պարտքով ծանրաբեռնել:

Այսուհետեւ «Հիմնական կանոնագրության» մեջ կան հետեւյալ պարզաբանությունները՝

«Վարժարանի նպատակն է և ավանդել ընդհանուր կրթություն և ուսում և կրթել արհեստից (métier) և արդիստագիտության (industrie)».

Վարչականի մասին առված է § 27-ում.—

«Խնամակալության պաշտոնն ու իրավասությունը կմնան անվթար, ցորչափ վարժարանը գտնվի Ասմանյան հողի վրա: Իսկ յերբեք յեթե հարկ լինի ըստ կտակի փոխազրել զայն ուրիշ յերկիր, այդ պարագային մեջ խնամակալության պաշտոնն ու իրավասությունը կփոխանցվին այն մարմույն, զոր կկազմե սուրբ Եջմիանա Սար Աթոռու Գանակալ Օմենայն Հայոց Կաթուղիկոսը, հիմնունենակալով Հիմնադրի կտակը և ներկա կանոնագրությունը: Վեհափառ Կաթուղիկոսը կարող է հիշյալ պարագայի մեջ ևս, յերբ հարկ անոնե և հարմար գտաե, պահել Կ.-Պոստ խնամակալությունն յուր պաշտոնին մեջ մասնակի կառամբողջական իրավասությամբ»:

«Վո և բարեփոխություն կտակի կանոնագրության մեջ մացնելու համար անհրաժեշտ է խնամակալության անդամների ^{3/4}-ի համաձայնությունը, ինչպես նաև Կաթուղիկոսի հավանությունն ու համաձայնությունը»:

Ահա սրբազն են Մ. Ամասարյանի կտակի և կանոնագրության հիմնական կետերը:

Կտակի հիմնական դրամագլուխն եր 60,000 ոռոսական վոսկի, վորից 19,000-ը վճարված է Կ.-Պոստում մի խան գնելու համար, վորի նորոգության վրա հետազայում յեկամուտներից ծախսված է ևս 10,000 վոսկի:

Մնացած գումարը՝ 40,000 վոսկին իրրի զանազան
տեսակի արժեթղթեր, մնացել և Պետրոպաղի Պետական
Բանկում և նացիոնալիզացիայի յե յենթարկվել:

Կ. Պոլսի կայքը «Վակուֆի» յե վերածված:

Համաշխարհային պատերազմի ժամանակ նու զբայ-
ված եր տաճկաց կառավարության կողմից, սակայն հաշ-
տությունից հետո, 1919 թվին, կրկին այդ կայքը վերա-
զարձից Կ. Պոլսի Խնամակալությանը, վոր խանր վարձով
ավելց մի անգլիական տոկոսական հիմնարկության տարե-
կոն 7,000 վոսկիով: Այժմ վարձի այդ զինը իջել է
3,000 վոսկու:

Վարձակալության այդ գումարները, վարչոց խակական
քանակը հայտնի չե պաշտոնական տեղեկագրերի բացա-
կայության պատճառով և սակայն պակաս չպիտի լինի
12,000 վոսկոց, այժմ զանուում և խնամակալության
նախազանի անսպան բանկի մեջ բացած բնիւուիկ հաշվում:

Խնամակալության այդ նախազանի և այժմ Գար-
րիել նորուունկյանը, խակ անգամներն են՝ Տ. Գյուլուշ-
կերտան, Վահան Յեսոյան, Էլիման Խոփոյյան և այլն:

Քոլոյցն, ինչպես հայտնի է, այժմ դոյլության չանի,
խակ յեզած գումարները մնում են անործադիր և զարն-
ցում են խնամակալության արամազրության տակ:

2. ՌԱՓԱՅԵԼ ՄԱՐԿՈՍԱՆԻ ԿՏԱԿԸ

Խոփոյյել Մարկոսյանը Փարիզի հայտնի գոհարավա-
ճառներից մեկն եր:

Նու իր կտակը զրել է 1920 թիի նոյեմբերի 19-ին
ովարդ նամակի ձևով, վոր հասցեագրով եր հետեւով
ոնքանալորություններին:

-
-
1. Եսմերյան Պողոս
 2. Եսմերյան Վահան
 3. Կյուլպեհնկյան Պատրիկ
 4. Դավարոսյան Տիրան
 5. Ճեփահիրճյան Հրանտ
 6. Միհրդատյան Մաքսուս
 7. Մինապյան Գրիգոր
 8. Նորատոհնկյան Գարբիել
 9. Նուպար Պողոս

Այդ նամակի բովանդակությունը կարծ է: Այսուղ տաված է:

«Մեծահարգ Տյարք,

«Ի՞նչպես հայանի և Զեղ, ի վաղուց անսախ, ցանկություն ունեցած եմ Ազգիս և Հայրենյացս կարեսը բաժին մը հանել իմ յերկար տարիներու տոհարական գործունեցության արդյունքին:

«Փառք տիրոջ, վոր խաղաղության կնքման հետ՝ Մայր Հայաստանի, իրը անկախ պետության, կազմությունը աեւնելու բարեքախտությունը ունեցա, կզամ, վոր ժամանակ և առանց հապաղման ձեռնարկելու նպատակիս գործադրության և այդ մտքով այսոր կը դիմեմ Զեղի, Մեծահարգ Տյարք, վոր հայ ազգին կարևորագույն և պատվական անդամներեն եք, և ապավինելով Զեր բարիյացակամության, կիմողրեմ, վոր ընդունիք հանուն հայ և Հայաստանի բազմակարոս մանուկներուն իմ այս նվիրատվությունու, անով հիմնելու համար հաստատություն մը «Մափայել Մարկոսյան» անվամբ:

«Այս նվիրատվությունը կբաղկանա հարակից ցուցակին մեջ նշանակված արժեթուղթերեն, զորս կը հանձնիմ Զեղ գրությանս հետ:

«Լիահույս եմ, վոր ինչպես կանխապես հոժարապին

հայրածած եցիք, Դուք ալ ի գիտաց Աղդին, Զեր թանկազգին ոժանդակությունը չեք զբանար այս ձեռնարկին և կիմնղրեմ, վոր ընդունիք, Մեծահարդ Տյարք, Հոռոհապարտ զգացմանս հավաստիքն:

Ու. Մարկոսյան»:

Կտակած գումարն եր յերեք միլիոն ֆրանկ, վորի վրա բարդված պիտի լինեն մի քանի հարուր հազար ֆրանկ տոկոսներ: Այն ժամանակի կուրսով կաներ մոտավորապես 400 000 ռուբլի:

Ճիշտ թվեր կրկին չի կարելի բերել, վորովհետեւ հրատարակված հաշվետվություն չկա:

Վերոհիշյալ այդ նամակին թ. Մարկոսյանը, կցում է նույն թվին գրած մի զրություն ևս, ուր առաջազրելով մի շարք տպայմաններ, խորում և կտակակատարներին հիմել մի վարչական խորհուրդ (onceil d'administration) կազմելով հիմնական կանոնագիր և «յենթարկել այդ կանոնագիրը Հայ Հանրապետության կառավարության վավերացման»:

Թ. Մարկոսյանի վերահաս մահից հետո, 1921 թ. ապրիլի 21-ին, կտակակատարները ի մի գումարվելով, կտակարի հրահանուի համաձայն, կազմում են մի Շվեյցարական ընկերակցություն, վորի կանոնագրությունը, ֆրանսերեն լեզվով հրատարակվում և հետեւալ վերասառությամբ՝ «St tats de l'association Réph. el Marg ssi ո» (կանոնագրություն թ. Մարկոսյան Բնկերակցության):

Ըսկերակցության անդամները, վորոնք ստորագրել և հաստատել են այդ կանոնագրությունը, հետեւալ անձնաւորություններն են.

1. Արամ Ճեղահիրճյան

2. Պողոս Եսմերյան

3. Վահան Եսմերյան

-
-
4. Պատրիկ Կյուլպենկյան
 5. Արվոն Կյումուշկերտանյան
 6. Մաքուտ Միհրդասյան
 7. Գաբրիել Նորատունկյան
 8. Պողոս Նուպար Փաշա
 9. Տ. Փիլիպպոսյան
 10. Գ. Մինապյան:

Ըստ ստատուտի՝ Մարկոսյան Ընկերակցությունը մի իրավական մարմին է, ունի իր անդաները, վորոնց թիվը պիտի լինի վոչ պակաս քան 9 և վոչ ավել քան 12, ունի իր նախագահությունը, բազկացած նախ գահից, քարտուղարից, գանձապահից, վերահսկչից և տեխնիքական խորհրդատուից վորոնք ընտրվում են 2 տարի ժամանակով:

Ընկերակցության նստասեղին ե Լոգանը:

Հանգուցյալ բարերարի կամքի համաձայն Ընկերակցությունը պիտի բաց անի, կիլիկիայում կամ Հայաստանում, մի արհեստագիտական գպրոց, վոր պիտի կրի «Ռափայէլ Մարկոսյան» անունը և ուր պիտի սովորեն, ձրիավարժ կամ թոշակով, հայ մանուկներ, առանց կրոնի խորության:

Կտակի հիմական դրամագլուխը պիտի պահ տրվի առաջնակարգ բանկերին:

Դպրոցի համար հողամաս գն' լու, ինչպես և դպրոց ների շինության ու կազմակերպչական ծախսերի համար կարելի ե ծախսել դրամագլուխի միայն $\frac{1}{6}$ բղ մասը, իսկ դրամագլուխը շահեցնելու համար անշարժ կայք գնելու վրա՝ դրամագլուխի $\frac{1}{3}$ մասը, իսկ պահեստի գումարի $\frac{1}{2}$ մասը:

Ընկերակցությունը պարտավոր է տարեկան մեկ անգամ հրապարակական հաշիվ տալ քաղաքացիական կամ կրոնական հիմարկների ու մամուլի միջոցով:

Իիկ լիդացիայի գեպը ում Ընկերակցության միջոցները

պիտի փոխանցվեն այնպիսի դործերի, վորոնք կպարտավորվեն կըել բարերարի անունը և չեն շեղի նրա առաջադրած նպատակներից:

Կտակի արամազրությունները կյանքի մեջ իրագործելու համար Ընկերակցությունը առաջին փորձն անում է 1924 թվին:

Նա հանձնարարում է Բարեգործական Միության կողմից Հայաստան մեկնող պատվիրակության անդամներ՝ և. Բաշալյանին և ինժ. Գեղորգ Ասատորին, վոր Նրանք տեղի ու տեղը ուսումնասիրեն և Ընկերակցությանը զեկուցեն դպրոցի բացման հնարավորության և պայմանների մասին:

Վերադառնալով Հայաստանից, 1924 թվի նոյեմբերի 12-ին, և. Բաշալյանը ներկայացնում է մի գրավոր գեկուցում, վորի մեջ ասված և, թե Հայաստանի կտավարությունը գոհունակությամբ ընդունեց Մարկոսյան կտակի գործազրման մտադրությունը և Յերեանի մեջ այդ նպատակի համար հատկացրեց $\frac{1}{4}$ դեսյատին հողամաս, իր կիսավուլ և կանգուն շենքերով։ Թեև այդպիսի շենքերը տրվում են վարձով քաղաքի կողմից վոչ ավել քան 49 տարի ժամանակի, սակայն Հայաստանի կտավարությունը, իբրև յերկրի գերագույն իշխանություն, վորոշեց այդ հողամասը հատկացնել Մարկոսյան դպրոցին ծրիարար և ընդմիշտ։

Այսուհետեւ Բաշալյանը ներկայացնում է.

1. Խորդ Մայերս Ֆոնդի Յերեանի ներկայացուցիչ միստր Նորդկոսի հանձնարարական նամակը, ուր վկայվում է գործի նպատակահարմարությունն ու դպրոցի համար ցանկացած չափով յերեխոներ գտնելու հնարավորությունը Յերեանում։

2. Խոր. Հայաստանի Հողագործ, Ժող. Կոմիսարի գրու-

իլլունը, ուր խոստացվում է բացվելիք զորոցի համար արտնություն՝ առանց մաքսի և Բաթումից մինչեւ Յերևան, առանց ձանապարհածախսի՝ արտասահմանից մեքենաներ, գործիքներ և այլ կահավորութենք, ինչպես և շինանյութեր բերելու համար։

3. Հայաստանի Տեխնիքական Գերագույն Խորհրդի հավանությունը զպրոցի հատակագծի նկատմամբ և առասարակ Յերևան քաղաքի հատակագիծը։

Նույն այդ ժամանակները Փարիզումն եր Հայաստանի Հողադորձության կոմիտար և ՀՄԻ-ի Գլխ. Վարչության նախագահ Ար. Յերգնկյանը։

Ագույն նրա ներկայությունից Բնկերակցությունը 1924 թ. դեկտեմբեր 27-ին ստորագրում է մի պայմանագիր։

Խոր. Հայաստանի կառավարության կողմից հանդես ե գալիս Յերգնկյանը, իսկ Բնկերակցության կողմից՝ Գ. Նորատունկյանն, Պ. Եսմերյան և Գ. Սինայյան։

Ըստ այդ պայմանագրի Հ.Ս.Խ. Հանրապետությունը արանում է Մարկոսյան կտակի գումարը գործադրել Հայաստանում, — մի արհեստագիտական զպրոցի կառուցմամբ և պահպանությամբ՝ հայ վորակյալ արհեստավորներ պատրաստելու նպատակով։

Սակայն այդ թվից անցնառմ է մի քանի ապրի և Բնկերակցությունը ժամանակը վահանում է զանազան բաշխակցությունների և գրագրությունների վրա, վորոնց նյութն և, թե ավ պիտի լինի ձարարապետը, կոտալառուն, յե՞րբ պիտի հաստատվի հատակագիծը և վերջապես վորո՞նք են յերկրի մեջ «շինությանց մասին դոյլություն ունեցող կանոններն ու որենքները» և այլն։

Իրերի այդ ընթացքի մեջ Փարիզ յեկավ Հայաստանի Ագնության կոմիտեյի և Կարմիր Խաչի ուստիվրակու-

թյունը, հանձինս Գրիգոր Վարդանյանի, կարեն Միքա-
յելյանի և բժ. Ա. Կամսարականի, վոր վերանորոգեց բա-
նակցությունները Մարկոսյան Խնամակալության հետ
կտակի արագ գործադրության առթիվ:

Վերջապես 1926 թվի աշնանը խնամակալության
հանձնարարությամբ Հայաստան յեկավ ինժ. Մ. Մինը-
դատյանը, վորին արտօնված եր հող ընտրել և 40,000 ր.
սահմաններում պայմանագորվել կառուցող ընկերություն-
ների հետ Յերևանի մեջ Մարկոսյան արհեստագիտական
դպրոցի հիմքը դնելու համար:

3. ՄԱՏԹԵՈՍ ԽԵՐՅԱՆԻ ԿՏԱԿԸ

Մատթեոս Խերյանը Ակնա կամարակապ գյուղումն ե-
ծնվել, ուսուահալատակ և արձանագրվել Յարսկոյե Սե-
լյուռում և գործով հաստատվել և Ալեքսանդրիայում: Նա
ծխախոտի վաճառական եր և կալվածատեր: Վախճան-
վեց 1924 թվի գեղտեմբերի 20-ին Փարիզում, 68 տա-
րեկան հաստակում:

Նախ քան մահը, 1914 թ. հոկտեմբերի 3-ին, Ալեք-
սանդրիայի Առաջնորդարանում կապվել և իր կտակը:
կտակակատարներ և նշանակել ա). Պոլսի Հայոց Պատրիար-
քին և բ). իր յեղբայր Մուրագ Խերյանին կամ նրա վոր-
դուն՝ Գրիգորին, ըստ վորում Պատրիարքին իրավունք և
տվել վերջիններիս փոխարեն ընտրելու այլ կտակա-
կատարներ:

Պատրիարքի փոխանորդն եւ այժմ Փարիզում ընակ-
վող Գ. Նորատառնկյանը, վորի ձեռին կենտրոնացած եւ և
կտակի ամբողջ գործը:

Ետակակտաւարների սլարտականությունն և ամբողջ հարստությունը զբամի վերածել և հանձնել Պոլսի Պատրիարքի նախագահության ներքո կազմվելիք խնամակալության՝ ի գործադրություն։

Ըստ այդ կառակի, հանգուցյալի կարողությունը հետեւալ պատկերն եւ ներկայացնում։

ա). Խտալիայի Պաղուա քաղաքի մեջ գանվում է 60 հեկտար տարածություն ունեցող մի ագարակ, վորի մեջ կա գյուղակ՝ գինու և ցորենի շանմարաններով, թռչնարան և այլն, և նույն Պաղուայի մոտ՝ Քամբոտորայում—3 գեղջկանական տուն։ Այս կալվածքը 1911 թվին վարձով եր տրված տարեկան 15,200 խտալական լիրայով 9 տարի պայմանագրով, Խիզոն Անջելո ղը օնդրիս անունով մի խտալացու։

բ). Սամսոնի մեջ պանդոկի մի մասը, մի խանութ և 4 տնակ,

գ). Արժեթղթեր,

դ). Դրամ գանազան բանկերում,

ե). Շխախոս՝ 100,650 կիլո և թեժ վոլո ծխախոս՝ 15,000 սիսա,

զ). Գինի՝ 275 հեկտոլիտր և 3,600 շիշ,

ե). Զանազան տեսակի գույք,

ը). Սահնակիքներ գանազան անձերից։

Իր կարողությունը կտակազրի մեջ հանգուցյալը գնահատել է 1,299,233 ֆրանկ, առանց կալվածները հաշվելու, Պաղուայի կալվածքը դնահատում է 300,000 ֆր. այն ժամանակվա կուրսով։

Իր ազգականներին (մայր, յեղբայրներ, քույրեր, վորդեղբած աղջիկ, հորեղբոր և մորաքրոջ վորդիներ) կտակով բաժին է հանել իր կարողությունից 524,994 ֆր.։

Իսկ հասարակական նպատակների համար թողել է հետեւալ գումարները։

1. Բիթլիսում՝ Կերյան յերկրագործական վարժարան
և վարժապետանոց հիմնելու համար՝ 310,000 ֆրանկ,

2. Արմաշի գլոբավանքին՝ 60,000 ֆրանկ,

3. Մերսինի մոտ Խրիստոյան գյուղի մեջիր անունով
մի յերկրագործական վարժարան բանալու համար՝ 260,000
ֆրանկ և Սուզանի կալվածի հասույթը,

4. Եջմիածնի կաթուղիկոսին՝ հայ արվեստի մասունք-
ներն ու հունական էրքանին՝ 10,000 ֆրանկ,

5. Կ.-Պոլսի պատրիարքարանին՝ աղջի անվան յեղած
կտակիների հետապնդման (Հնդկաստան) և լավագույն ոգ-
տագործության համար՝ 20,000 ֆրանկ,

6. Պոլսի Պատրիարքարանին՝ ծեր և աղքատ ուսու-
ցիչներին կենսաթոշակ՝ 10,000 ֆրանկ:

7. Պոլսի Պատրիարքարանին՝ ծախսերի համար հիմ-
նաղրամ՝ 25,000 ֆրանկ:

Նախառեսնելով, վոր հաշվեհարդարի պարագային յեն-
թաղրյալ գումարները կարող են նվազել, վորոշապես
շեշտում ե, վոր ազգային-բարեգործական նպատակներին
հատկացրված գումարները նույնությամբ պիտի իրագործ-
վին, իսկ մնացածներին կտակած գումարները կարող են
զանց առնվիլ, յեթե կարիք լինի:

Մ. Խելյանը մեռավ համաշխարհային պատերազմի ժա-
մանակ, վորի պատճառով հնարավոր չեղավ կանոնավոր կեր-
պով լիկվիդացիայի յենթարկել նրա խոշոր կարողությունը:

Նախ Սամսոնի կարվածքը դրավիտում և թյուրք կտա-
վարության կողմից, իսկ Սուզանի կալվածքի արժեքը
մեծապես ընկնում ե:

Այսուհետեւ նրա թողած ապրանքներից և մյուս ստաց-
վածքից կտակակատարներն ու ժառանգները վո՞րքան են
ծախսել և ի՞նչ են արել, ստույգ տեղեկություններ չկան:

Համենայն գեպս բանկերի մեջ յեղած գումարների և

ծխախսսովի մի մասը գտնվել են կտակակատարները: Կրկին սառւյղ տեղեկությունները պակասում են:

Մնամ և նա՛ իտալիայի մեջ Պազուա քաղաքի մոտ գտնված կալվածքը, վոր այժմյան գներով մոտ 1,500,000 ֆրանկ արժեւ:

Այդ կալվածքը, ըստ 1875 թվի իտալո-ռուս կոնվենցիայի, վերցրել եր իր հովանակորության ներքո ռուսական ցարական զեսպանը, իրու ռուսահպատակի ժառանգություն և գանձել է վարձը: Նույնը արել և և ռուսական ժամանակոր կտակալարության զեսպանը, մինչև 1924 թիվը, յորը իտալական կառավարության կողմից ճանաչվեց Խորհրդային Միությունը:

Թէ ի՞նչ են արել ստացած կապալավարձը ռուսական նախ-խորհրդային հյուպատոսները, կրկին սառւյղ հաշվուներ չկան: Ըստ յենթադրության, այդ գումարներն ես պիտի գանձած լինեն հանգուցյալի կտակակատարները:

10 տարի շարունակ այդ կալվածքի մեջ եր ապրում Մ. Խերյանի քույըքերեց մեկը, որ Վերգինեն:

Յերբ Խորհրդային Միության ճանաչման ինդիքը յերեան յեկավ, նա համեարծ հայտարարեց, վոր Խերյանի միակ ժառանգը ինքն և 1914 թվի մայիսի 10-ին կալվածքի անորինության վրա դատական արգելք դրեց, վորից հետո սկսվեց մի շարք խաչաձև դատավարություններ կապալատուի, որ. Վերգինեյի, խնամակալության և Խորհրդային Միության Հյուպատոսարանի միջեւ:

1926 թվին Հայաստանի Ողնության կոմիտեյի և Կ.-Խաչի պատվիրակությունը Անդրկովկասյան Ֆեղերացիայի ներկայացուցիչ Ս. Փիրումյանի հետ, Փարիզում մի զրությամբ համաձայնության յեկան Խերյան կտակակատարներ Գ. Խորատունյանի և Գր. Խերյանի հետ, վոր առաջինները դատավարության ժամանակ ապահովեն իտալիայի

Խորհրդային Միության գեսպանի բարեհապատ միջամտությունը հոգուս կտակակատարների, յերբ վերջնները իրենց արամազրության տակ գաճված գումարներից համաձայն Խորհրդային Հայաստանի մեջ մի ձեռնարկություն սկսել, զոնե, Բաղեշի զոլորցին հատկացված գումարով, կտակի մյուս հոգվածների գործազրման վորոշումը թողնելով մոտակա ապագային, յերբ ընդհանուր հաշվեհարգարն ավարտված լիինի:

Այդ գումարը 310,000 ֆրանկ է, վոր որվա կուրսով կտներ 14,000 սովորական ոռութիւն Դրանով, Արագածի լանջերին, ուր ապրում են Տաճկահայաստանից յեկածաղթականները, ովհաի հիմնվի մի մեղքարուծական զպրոց:

Այդ գումարը ստացվեց խնամակալությունից:

Այժմ մնում է, վոր խնամակալությունը հասպարակական հաշխիվ տա, թե վորքա՞ն են գանձել հանդուցյալի թողած կարողությունից, վորքա՞ն են բաժին հանել Կրտսեղգականներին և ի՞նչ են մտադիր անել մեացած գումարը ներկա ստեղծված պայմանների մեջ:

4. ԿՅՈՒԼԼԱՐԻ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻ ԿՏԱԿԸ

Հայունի գորգավաճառ եր Ամերիկայում, «Էլուստրական» Տուն կ. Կյուլպենկյանից հիմնադիրը:

Իր կտակը զրել է 1916թ. մայիսի 29-ին, Նյու-Յորքում:
Այդ կտակի համաձայն նա թողել է՝

1. իր ամուսին Մարի Կյուլպենկյանին՝ 50,000 դոլ.

2. իր քույր Վարդուհի Թյուբապյանին՝ 50,000 դոլ.

3. իր քույր Մարի Կյուլպենկյանին՝ 50,000 դոլ.

4. իր կնոջ համար թողել է 300,000 դոլար այս պայմանով, վոր Կրտսեղգական տոկոսները, վոչ պակաս քան 12,000 դոլար, տրվեն կնոջը, քանի նա կենդանի է,

իսկ մահվանից հետո այդ գումարը մնա նրա յերկու յեղքայրներին — Պատրիկ Կյուլալենկյանին և Հարություն Կյուլպենկյանին:

5. Իր յեղբոր վորդի Հովհաննես - Վահան Կյուլալենկյանին թողել է 25,000 դոլ., իսկ մահվան դեպքում, յեթե նա անժամանգ լինի, այդ գումարը պիտի հանձնվի Կ. Պոլսի Սուրբ Փրկիչ Հայկական Հիվանդանոցին:

6. Իր կտակակատարների տրամադրության տակ ե թողել նաև 300,000 դոլար, վորպեսզի իր կնոջ Մարի Կյուլալենկյանի և յեղբոր Հարություն Կյուլալենկյանի կենադանության ժամանակ կազմվի «մի բարեգործական ընկերակցություն», վորի նպատակը պիտի լինի կազմել ուղանել մի հիմնարկություն մի կամ մի քանի բարեգործական նպատակների համար՝ Հայ ժողովրդի բարորության ու ոգտին ծառայող, այն ծրագրով, ձևով կամ այն տեղում, վոր կվորոշի վերոհիշյալ ընկերակցությունը»:

7. 25,000 դոլար ել թողել ե իր առևտրական տան անդամներից նրան, վոր իրենից ավելի յերկար կապրի և խնդրում ե, վորպեսզի նա բաշխի այդ գումարը իր այն ցանկության համաձայն, վոր նա ասել ե անձամբ:

8. Իսկ մնացած կարողությունը նա կտակել ե իր յերկու յեղբայրներին՝ Պատրիկ և Հարություն Կյուլալենկյաններին:

Այսպիսով կ. Կյուլալենկյանը բարեգործական նպատակների կտակել է 300,000 դոլար վորին, յեթե չենք սխալում, իր յեղբայրը, Պատրիկը ավելացրել է ևս 100,000 դոլար ուրեմն ընդամենը 400 000 դոլ.։

Այդ գումարներին պետք է ավելացնել և տարիների ընթացքում կուտակված տոկոսները։ Յեղել են վորոշական կրթական գործի վրա Հունաստանում։ Դժբախտաբար դժվար է տալ վերջնական թվեր, վորովհետեւ հրա-

պարակական հաշվետվություն ընկերակցությունը չի հրատարակել:

Նրա մահվանից հետո, վոր տեղի ունեցավ Ն.-Յորքում 1919 թվին, նրա կտակակատարները՝ կինը Մարի Կյուլպենկյանը, յեղբայրը Հարությունը և յեղբոր վորդին Սերոբը 1920 թվի ապրիլի 29-ին, որինական կերպով կազմում են մի ընկերակցություն—«Կյուլպենկյան Հիմնարկություն» անունով, վորի անդամները հանդիսանում են հետեւալ անձինք.—

1. Մարի Կյուլպենկյանը, կինը
2. Պատրիկ յեղբայր
3. Հարություն յեղբոր
4. Ներսես յեղբոր վորդին
5. Պողոս Եսմերյան, յեղբոր փեսան
6. Վալյանը Հիլլորն,
7. Ջրանկ Քրոկտոր, | ամերիկացի փաստաբաններ:

Համաձայն կտակի, հիմնարկության նպատակն է. «Հայաստանի ժողովրդի ֆիզիքական և տնտեսական բարությունը բարձրացնելու և արդյունագործությունը զարգացնելու համար հիմնել և պահպանել Հայաստանի մեջ կամ այլուր մի գյուղատնտեսական դպրոց»:

Այդ նպատակի իրականացման համար Հայաստանում առաջին անգամ «Կյուլպալի Կյուլպենկյան Հիմնարկության» կողմից փորձ է լինում 1924 թվին Հայաստան յեկածինքործականի լիազոր և. Բաշալյանի միջոցով:

Վերջինս, համաձայնության գալով Խ. Հայաստանի կառավարության հետ, 1924 թվին Հայաստանի Հողագործության կոմիսարի տեղակալ Ս. Շաղոնցի, Լուսավորության կոմիսարի տեղակալ Հ. Յաղուբյանի հետ միասին կողմում են մի պայմանագիր, վոր պլիտի հաստատվեր Կյուլպալի Կյուլպենկյան Հիմնարկության կողմից:

Բոստ այդ պայմանագրի, Հողժողկումառը ձրիաբար արամաղլում և «Կյուլլապի Կյուլպենկյան Հիմնարկում թյանը» Եվջիլարի շրջանում մի հողամաս 705 գեայատին, կամ Վաղարշապատի շրջանում 300 դես. և կամ Դալմայի շրջանում 500 դես. տարածությամբ, ուր պիտի շինովի կյուլպենկյան զյուղանատեսական փորձնական ուսումնաբանը, հմուտ զյուղացի յերկրագործներ պատրաստելու համար։

Յերեք վարյանուում և Հողժողկումառը արամուում և ուսումնաբանին, ամառային սեզոնին, ոգալիւու Արագածի արուավայրերից, այսուեղ տնենալու ամառանոց թե աշակերտների և թե զպրոցի անսատունների համար։

Այդ զպրոցը ազտու և ընդմիշտ հարկերից, և վոռողման համար ջուրը ստանում և ձրիւ Կյուլպենկյան Հիմնարկումթյան այդ զպրոցը գտնվում է Լուսժողկումատի անորինության տակ, սակայն Հիմնարկությունն իրավունք ունի նշանակելու իր վարիչը, փորին հաստատում է Լուսժողկումատը։

Այս պայմանագիրը, ինչպես և Եվջիլարի և Վաղարշապատի հոգերի հատակագծերը հեար տանելով լ. Բաշալյանը մի մանրամասն դրությամբ 1925 թվի հունվարի 18-ին Փարիզից զեկուցում և իր վարուծ բանակցությունների մասին «Կ. Կյուլպենկյան Հիմնարկության» վարչությունը։

Պատասխանը հայտնի չեւ։

Կտակը մինչեւ որս չի զործադրված։

5. ՅԵՐՎԱՆԴ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԿՏԱԿՆ ՈՒ ՆՎԵՐԸ

Ծնվել և Կ. Պոլսում և տեղափոխվելով Ֆրանսիա, ընդունել և Փրանսիական հողատակություն և վախճանիել Դինարում (Ֆրանսիա) 1923 թ. զեկուելերի 3-ին։

Նա բարեգործական յերկու գործողություն եւ կատարել, մեկը նվիրաբերությամբ, մյուսը՝ կտակով:

Իր կենդանության որով, 1913 թվականի հունվարի 9-ին, նամակի մեջ դնելով 25,000 ֆրանս. ֆրանկի մի չեք, վոր այն ժամանակ կանեք 1000 անդ. ֆ.առ., ուղարկում եւ Հայ Բարեգործական Ընդհանուր Սիության նախագահին, ասելով ի միջի այլոց.

«Յես հարուստ մարդ չեմ, բայց հայրենիքս անձեռ ավելի կը սիրեմ... Ներփակ չեղ կհանձնիմ 25,000 ֆրանքի չեք մը մեր սիրելի Սիության համար (խոսքը Բարեգործականի մասին ե, կ. Մ.) և կիսնդրեմ, վոր իմ համեստ նվիրատվությանս տարեկան տոկոսները հատկացնեք Սասունի Թալվորիկ գյուղի պետքերուն: Պետք ասելով կհասկընամ նպաստ հիշյալ գյուղի զպրոցին, վորքերուն կամ բաջալերություն յերկրագործության»:

Այդ գումարի տոկոսները մինչև 1925 թիվը մնացել ելին անգործադիր:

Նույն թվին ՀՈԿ-ի արտասահմանյան պատվիրակության հետ համաձայնության դալով, Բարեգործականը վորոշեց մինչև 1925 թվի գեկտեմբերի 31-ը գոյացած տոկոսները, այն եւ 415 անդ. ֆ.ստերլինդ, ուղարկել Հայաստան, Արագածի լանջերին վերաբնակած սասունցիների գյուղերից մեկում մի վարժարան հիմնելու համար:

Գումարը ուղարկված եւ հայաստան:

Այսուհետեւ, նախ քանի իր մահը՝ 1919 թվի հունվարի 1-ին կազմել եւ հետեւյով կտակը:

«Ստորագրյալս՝ Յերվանդ Հակոբյան, ծնած կ.-Պոլսում, ամուրի, առանց զավակի, բնակիչ Դինար Իլ—ե—Վիլենի, Փրանսիական հպատակ, լինելով մարմառի և մըտքով առողջ, ցանկանալով անել իմ կարգադրություններն այն որվա համար, յերբ իմ ժառանգությունը կսկսի,

արի այս կտակը՝ ամրողջապես իս' ձեւրավ զրգուծ։

Յեռ վոչնչացնում էմ բոլոր կտակները, զորոնք յեղել են և հաստափել են որոնից առաջ և իս' ամրող սահցվածքը կտակում էմ։

1. Տառ հազար ֆրանկ հայկական «Միացյալ Բնիք-րությունը», զորի հաստափելին և Կ.-Պոլիսը, ոճանշակելու համար վերականգնմանը այն դորոցների, զորոնք վաստավել են 1914 թվի սպառերազմի հատկանիւրաբ։

2. 10 հազար ֆրանկ բնակչություններին այն նավասահների, զորոնք սպանվել, խեղզվել և ամենից շատ չարչարժել են «Դեղե», «Գիշան», «Ազմիքալ-Շառնել», «Ֆուդր» և «Դեմորես» նավերի վրա, արիարար աջակցելով Մասս լեռնեն վրա սպասարկման 5000 հայերի ազատազրման զործին, վերջին Ֆրանկո-Գերմանական պատերազմի ժամանակ։

3. Իմ չարժական և անշարժ կայրը՝ Հայաստանի Պետք (ՄԷծ Հայաստան վարչ, Երգերում) հայ զորբանց հիմնելու համար, ուր պիտի հայարժեն հայ ազգի և հայ ծնողներից ծնված զորքերը ու զորբունիները։

Փափազո և, զոր հայ ազգային ուսուցումը, ինչպես և ֆրանսերեն լեզուն, լինեն այսանգ սորբազիր։

Ինչ վերաբերում է իս' զորբանցի հիմնարկությանը, այսանգ բնակչութելիք վորքերի քանակին, նրանից պահպանման, ինչպես և ուսուցման ծախսերին ու առձիկներին և այն. իս' զորբանցի յերկրի ու անդի բնարությանը և նման հարցերի զորոշամբ, յստ միանգամայն թուղթում և մ Հայաստանի Պետք բացարձակ հայեցողության։

Իսպմից Դիմորում, 1919 թ. հունվարի 1-ին.

(Սոորազրություն) Յերվանդ Հակոբյան։

Յե. Հակոբյանի կտակի հիմնական դրամը, իր տոկոսներով, համառում և մինչև 400,000 ֆր.։

Մահվանից հետո, որու ժառանգները՝ Հակոբ Հակոբ-

յանու, Նարդիկի Հակոբյան և Վերդինե Հակոբյան, դատ են բաց անում կտակի վավերական լինելուն զեմ, ուր նրանք բերում են, ի միջի այլոց, յերկու հիմնական կետեր.— ա). Վոր ՄԵծ Հայաստան՝ վանով ու Երգերումով, գոյություն չունի, ը). Կտակը գրված է 1919 թվին, մինչդեռ Թղթի վրա կտ 1920 թվի ջրային կնիքը:

Այս հիմունքների վրա ֆրանսիական դատարանը 1923 թվի գեկտեմբերի 3-ի վորոշումով մերժեց Հայաստանի կտակարության Պետի (շնչի)՝ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ Լուկաշինի հայցը:

Յերկրորդ անգամ, ապելացիոն կարգով, խնդիրը քննվեց 1926 թ. հունիսի 23-ին, Ռենի քաղաքային Ատյանում: Հայաստանի շահերը պաշտպանեց փաստաբաններ Մարմարյան: Նո ապացուցեց, վոր նախ Հայաստանը դաշնակից, բայց անկախ պետություն է, վոր ձիչա և վանն ու Երգերումը չեն մտնում Հայաստանի այժմյան սահմանների մեջ, սակայն վանեցիներն ու երգրումցիները ապրում են այժմյան Հայաստանում և վոր Հայաստանի պետությունն ունի իր շեֆը, վոր, համաձայն իր սահմանադրության, համովանում է Հայաստանի կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահը:

Այդ տեսակետից Հայաստանի պաշտպանը շահեց դատը, սակայն վերջնական վորոշում չկայացավ կտակի մի շարք ձեռական թերությունների պատճառով (թվականի ինդիք և այլն):

Այսպիսով Յերվանդ Հակոբյանի կտակի գործադրության խնդիրն առ այժմ մնում է առկան:

6. ԴԱՐՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՖՈՆԴԸ

Դարուհի Հակոբյանի ֆոնդը գտնվում է Հայկ. Բարեգործական Ընդհանուր Միության տրամադրության տակ և բաղկացած է, համաձայն նրա 1923 թվի տեղեկագրի, 25.000 յեղիպտական վոսկու գին ունեցող արժեթղթերից և բերում է տարեկան հասույթ 1400 յեղիպտական վոսկի:

Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Ար. Ցերպլինիյանը մի կողմից և Բարեգործական Միության Նախագահ՝ Պողոս Նուպար Փաշան և անդամներ՝ Կյումուշկերտան և Գ. Սինապյան մյուս կողմից, ու հետագայում՝ 1924 թ. հոկտեմբերի 18-ին Ցերեանում՝ Հողժողկոմատի, Առժողկոմատի և Բարեգործականի ներկայացուցիչների կողմից յերկրորդ անգամ՝ կնքված պայմանագրերի համաձայն՝ Բարեգործական Միությունը հանձն և առնում Դարուհի Հակոբյանի ֆոնդի կուտակված հասույթներից 7110 անգլիական վոսկի տրամադրել Ցերեանի մեջ, Համալսարանին կից, մի Մայրության առևն շինելու և այստեղ մանկաբարձական կուրսեր հաստատելու՝ Դարուհի Հակոբյանի անունով:

Մայրության տան բոլոր ընթացիկ ծախքերը հոգում և Խորհրդային Հայաստանի կառավարությունը:

Բարեգործականը Դարուհի Հակոբյան ֆոնդի յեկամուաներից 5%-ը պահում է իր վարչական ծախքերի համար, 10%-ը ավելացնում է իր պահեստի զբամաղը՝ խին, և տարեկան 800 անգլ.ֆ. ստերլինգ հանձնում և Դարուհի Հակոբյան Մայրության տանը՝ մանկաբարձուհիներ պատրաստելու համար:

Ի կատարութիւն այդ պայմանագրերի, Մայրության տունը՝ ներկայումս կառուցվում է:

7. ԳՐ. ՄԵՌԱՏԵՄԵՏՅԱՆԻ ԿՏԱԿԸ

1925 թ. հունվարի 10-ին, Փարիզում, Հայաստանի կոռավարության ներկայացուցիչ՝ Սր. Յերդնկյանը մի կողմից և Բարեգործականը, վոր հանդիսանում և Մեռնակամետյանի կտակակատարը, մյուս կողմից, կնքել են մի պայմանագիր, համաձայն վորի Բարեգործականը Հայաստանի կտակարության տրամադրության տակ և դնում Մեռնակամետյանի կտակից 2,600 յեղիպատ. վոսկի, Հայաստանի մեջ մի զյուղ շինելու, վոր համաձայն հանգուցյալի ժառանգների դանկության, պիտի կրե «Նոր-Յեղոկիա» անունը:

Գյուղի համար հող պիտի հատկացնվի Եվջիլարում և առաջին ներթին ընակության համար պիտի տրվի յեղունկացիներին, վորոնկը պիտի ստանան միւմի անակ, լծկան, հողագործական գործիքներ, սերմացու և այլն:

Այսուհետեւ կտակի տարեկան հասույթները Բարեգործականը պիտի հանձնի զյուղի ընդարձակման և բարության համար:

Գյուղում հաստատված ընտանիքները ստացած նպաստը 5 տարուց հետո, 10 տարվա ընթացքում, պիտի վերադարձնեն, վորպեսզի կրկին գործադրվի զյուղի դարգացման համար:

Վերօնիշյալ պայմանագրության գործադրության հոգարիքը վրա յե վերցնում ՀԱԿ-ի Գլխ. Վարչությունը Յերեւանում:

Կտակի հիմնադրամը կազմում է Յեղիսկտոսում գտնվող մի հող, վորի տարեկան հասույթը, նայած բերքին, հավասար է 300—500 յեղիպտական վոսկու:

Գումարը փոխադրված և զյուղը շինված, ուր ապրում են արդեն 29 յեղիպտական ընտանիք:

8. ԱՎԵՏ ՍԱՐԳՍԻ ՖՈՆԴԸ

1925 թվականի մարտի 7-ին, Պողոս Նուռպար Փաշան մի նամակով հայտնում է Ժողկոմխորհի նախագահ Ա. Լուկաշինին, վոր հանգուցյալ Սարդիս Ավետի այրին, Բարեգործականին և հանձնել 1000 ֆ. անգլ. ստ., վերով պիտի շինովի մի գյուղ, վոր պիտի կը հանգուցյալի անունը: Այդ իմաստով Բարեգործականը Ա. Յերզնկյանի հետ 1925 թվի հունվարի 8-ին կնքել է մի պայմանագիր:

1925 թ. մայիսի 5-ին Ժողկոմխորհը քննում է այդ առաջարկը և գտնում, վոր այդպիսի գումարով անհնար և գյուղ շինել և նպատակահարմար և համարում Պետական գաղութում վորբերի համար մի հիվանդանոցի շենք կառուցել:

Ժողկոմխորհի այդ վորոշումը, 1925 թվի մայիսի 7-ին, նրա Քարտուղար Աթարեկյանը հայտնում է Բարեգործականի նախագահ Պողոս Նուռպար Փաշային:

Պատասխանը թողնված է Ավետ Սարգսի կտակակատարներին: Դրանցից մեկն և Ե. Կարիկյանը, վոր գտնվում եր Հայաստանում:

9. ԶՈՆ ԱՐԱՇԱԿՈՒՆՈՒ ԿՏԱԿԸ

1925 թ. ոգոստոսի 17-ին Վարդան Մալքոլմը, ՆյուՅորքից, իր և ներկայացուցիչ՝ Նյու-Յորքաբնակ Արշակ և Միհրան Գարագողականների, վորոնք հանդիսանում են կտակակատարները Դր. Զոն Արշակունու, հաղորդում ե, վոր վերջինս, Զոն Երշակունին, վոր վախճանվեց 1925 թ.

սպասառի 1-ին, մի կտավով, հաստատված նոտարի մոտ
1924 թ. նոյեմբերի 20-ին, Հայաստանի Հանրային գրադա-
րանին և թողել իր բոլոր զրբերն ու գործիքները, վորոնց
թվում և մի միկրոսկոպ:

Բացի այդ նույն Արշակունին Բարեգործական Բնկե-
րությանն և կտակել գրամատան մեջ ունեցած իր 6000
դոլարի չափ ավանդը, վորապես նրա ձեռքով գործադրվի
հայ վորբերի համար, Բարեգործականի դատողության
համաձայն:

10. ԶԱՏԻԿ ԽԱՆՉԱՏՅԱՆԻ ՆՎԵՐՆ ՈՒ ԿՏԱԿԸ

1925 թ. գեկտեմբերի 29-ին, Փարիզում, Զատիկ
Խանչատյանը, վոր քարտեզներ պատրաստող ֆրանսիական,
մի ընկերության անդամն և և հայունի մասնագետ Փոքր-
Ասիայի յերկրների աշխարհագրության, մի նամակով,
ուղղված Հայաստանի Ռենության Կոմիտեյի պատվիրա-
կությանը, հաղորդում և հետեյալլ:

«Ներկա նամակով պատիվ ունիմ հայտարարելու Զեղի,
վոր տրամադիր եմ հրատարակելու ի մոտո Հայաստանի
տնտեսական աթլազը, ավելի կատարյալ, քան թյուրքիյո
մասին հրատարակած մեր վերջին գործը, ուրիշ հատ մը
ունիք ի ձեռին:

«Հայաստանի աթլազին հրատարակության բոլոր ծախ-
քերը, (մոտավորապես 125,000ֆ.), պիտի հոգամ անձամբ և
հրատարակած աթլազներու ամբողջությունը պիտի նվի-
րեմ Հայաստանի կառավարության, վորպես իմ համեստ
գործակցությունս՝ իր շինարարական գործին:

«Սույն աթլազին պատմական քարտեզներու տպա-
գրությունը լրացած և արդեն, իսկ հին մայր քարտես-

ներու իմ անձնական հավաքածուն, վոր ծառայած և աթ-
լազի ընդորբնակության, նպատակ ունիմ, հետ մահու,
մասնավոր կտակով, թողելու Հայաստանի կառավարության:

«Խնդրելով, վոր հաճիք հաղորդել այս արամազրու-
թյուններս Հայաստանի կառավարության պատիվ ունիմ
և այլն»:

Այսուհետեւ բերում ե աշխարհագրական հավաքածուի
դիմումը անվանացուցակը, վորի մեջ կան չափ հազվա-
գյուտ քարտեզների հավաքածուներ, ինչպես որինակ՝
Սարդանապալի (2000 տ. Ք. ա.) Պաղոմեսսի, Սարտրոնի
(1 դ. Ք. ա.) Հերաթեյի (5 դ. Ք. ա.), Խաչակրաց, Կա-
սինի, Արգելիուսի, Մերկատորի, Ամսակրդամի Վոսկան
Վարդապետի, Ժայռի և այլն քարտեզները:

11. ՄԿՐՏԻՉ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՏԱԿԸ

1926 թ. Մկրտիչ Հովհաննիսյանը, Ցեղիպատուս
քնակվող մի հայ, ներկայացել է Արմենակ կամսարա-
կանին և հայտնել, թե ցանկանում է Բարեգործականին
թողնելիք հաբստությունը, վոր բազկացած է 2000 ֆ. անգլ.
ստերլինգի չափ արժեթղթերից, պայմանով, վոր ընկե-
րությունը.

1. Իր մեռնելուն հոգա իր դամբարանի ծախքը Ալեք-
սանդրիայի Հայոց Գերեզմանատան մեջ, հատկացնելով
100 վոսկի:

2. Մնացյալով Հայաստանի մեջ մի դպրոց կառու-
ցի իր անունը կրող, նախապատվությունը տալով ծրագրված
նոր-Խարբերդ գյուղին:

3. Ցեղե մինչև 1931 թվականը ապրի, Բարեգործա-

կանը, սկսած այդ թվից, իրեն կենսաթոշակ հատկացնի տարեկան 120 վոսկի:

Կամսարականը ընդունում և այդ նվերը և բոլոր ձեականությունները կատարում, կտակը Բարեգործականին փոխանցելու համար:

12. ՍԻՄՈՆ -ԳԱՐԵԳԻՆ ՓԱՇԱՔԱՐՅԱՆԻ ԿՏԱԿԸ

Նորեքս վախճանվելով Ամերիկայում, զբաժառան մեջ ունեցած իր 4,000 գոլլարը կտակել է Բարեգործական Միության, պայմանով, վոր նա այդ գումարից 1,500 գոլլարը հանձնի իր յերկու աղջականներին, իսկ մնացած 2,500 գոլլարը գործադրվի վորբերի խնամատարության ու դաստիարակության համար, Հայաստանում կամ Սերամավոր Արևելքում:

13. ԵԿՆԱՅԱՆԻ ԱՎԱՆԴԸ

1925 թվին Փարիզում վախճանվեց հայտնի հարուստ Եկնայանը:

1926 թվին, նրա ժառանգները, համաձայն հանդուցյալի կամքին, վոր սիրտի կատարելին նրա մահվանից մեկ տարի հետո, հանձնեցին 1,000,000 ֆրանկ Պողոս Նուպար Փաշային, վորպեսզի վերջինս, իր հայեցողությամբ, գործադրի բարեգործական նպատակների համար:

Գումարը գեռ չի գործադրված:

14. ԱՆԱՆՈՒՆ ԿՏԱԿ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

1925 թ. ապրիլի 1-ին Պողոս Նուազար Փաշան մի դրությամբ հայանում եւ հայաստանի ժողկոմիսորհի նախագահ Ա. Լուկաշինին, վոր Կանիքելի բնակիչ Ա. Հոռոմյուղի հայության համաձայն, իր բարեկամներից մեկը, վոր իր վրա եւ վերցրել մի կտակի գործադրություն, մի շարք տեղեկություններ եւ ուզում իմանալ իրեն հետաքրքրուղ հարցի մասին։ Հետաքրքրության այդ առարկան այն եւ, վոր նա ցանկանում է Յերևանի մեջ հիմնել մի Հանրային գրադարան։

Այդ գրության ի պատասխան, Հանրային գրադարանի վարիչ Յեր. Թաղիանոսյանը պատրաստում եւ մի գրություն, ուր նկարագրելով թե ինչ կարգի և չափի գրադարան ե պետք Խ. Հայաստանին, հաղորդում է վոր այդպիսի գրադարանի շենքը կնսակ մոռ կես միլ. ռուբլի։

Մայիս ամսին այդ հուշագիրը ուղարկվում է Պողոս Նուազար Փաշային, վոր մնում է անպատճախան։

Նույն գրադարանի հարցը հրապարակ է իշխում 1926 թ. հունիսի 23-ին, յերբ Բարեգործականի անորեն Գ. Սինալյանը մի գրությամբ հաղորդում է Ենթակովկասի Փարիզի ներներկայացուցիչ Ա. Փիրումյանին, վոր մի յեղիպահայ, վոր ուզում եւ ծածկել իր անունը, պատրաստ ե 7-8000 վոսկի տրամադրել մի հանրություն շինության կառուցման համար Հայաստանի մեջ, պայմանով, վոր կրի իր անունը և վորովհետև գրասեր անձ եւ, փափագում ե շինել մի գրադարան, սակայն վոչ Մյամիկյան, վորովհետև նախ նա ունի իր անունը և յերկրորդ՝ նրա կառուցման համար անհրաժեշտ ե կես միլյոն ռուբլի։

Համալսարանի ներկառոր Հ. Հովհաննիսյանը 1926 թ. ողոսառոսի 12-ին հաղորդում է մի գրությամբ, վոր նման

մի զրագարանի կարիք ունի համալսարանը, վորը կարող կլինի նշանակված գումարով գլուխ բերել զործը:

1926 թ. նոյեմբերի 26-ին կտակների ուսումնասիրության և գործադրության հանձնախմբի նախագահ Դուռդղարյանը դիմում է ժողկոմխորհին, վոր վերջինս ընդունի Համալսարանի առաջարկը:

Առաջարկը ուղարկված է Փարիզ, սակայն դեռ պատասխան չկա:

15. ՍԵՐԻԱԿ ԳԸԼԸՑՅԱՆԻ ԿՏԱԿԸ

Աեղբակ Գլլըճյանը, Աերաստիայի Մարզվան քաղաքից, ընակվում էր Հյուս. Ամերիկայի Միչիգըն նահանգի Գրենֆիլ Ռեվլիզ քաղաքում։ Վախճանվել է 1924 թ. նոյեմբերի 26-ին։

Նախ քան իր մահը, նույն թվի նոյեմբերին նա թուղել և մի կտակ, վորով կարգադրում է իր արդար պարտքերը, հուղարկավորության և իր գերեզմանի վրա կանգնեցնելիք հուշարձանի ծախքերը վճարելուց հետո, իր ամբողջ կարողությունը տալ Յերևանի Համալսարանին, իրի ֆոնդ, վորապես նրա յեկամուտը զործածվի իր հայրենի Մարզվան քաղաքի հայ վորբերի համար։

Նույն Համալսարանին և նվիրում նաև իր 14 շրջանագարդ պատկերներն ու մեկ փոսկը նարդին։

Իրեւ կտակակատար նշանակում է Միչիգըն նահանգի «The Michigan Trust C°» հիմնարկությունը։

Մահվանից հետո պարզվում է, վոր նրա համեստ կարողությունը 3351 դոլարի արժեք ունի, բացի իր աղանովագրության տամսից, վոր արժեք 1000 դոլար և վորը կրկին թողել է Համալսարանին։

Նրա կտակած կարողության վերջնական հաշվեհարդարումը դեռ չի վերջացած։

16. ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻՆ ՀԱՆՁՆՎԱԾ ԿՏԱԿՆԵՐԸ

Այդ կտակներից մի քանիսի՝ Դարուհի Հակոբյանի,
Մեռհանեմետյանի, Յերվաճնդ Հակոբյանի մասին մենք հիշատակեցինք վերը:

Սակայն բացի գրանից Բարեգործական Ընկերության են հանձնել ևս մի քանի տասնյակ կտակներ և նվիրաբերություններ՝ այս կամ այն նպատակներին զործագրելու համար:

Կը երենք զբանց 1923 թվի ցանկը, զոր Բարեգործականի տեղեկագրի մեջ հիշատակվում է «Մասնավոր զրամագլուխներ» անվան տակ.

Յեղիպտ. վուկի

| | |
|--------------------------|-----------|
| 1. Գ. Մեռհանեմետյան | 5,564.744 |
| 2. Դրամագլուխ Պ. | 4,928. — |
| 3. Տ. Քելեկյան Խան | 2,901.874 |
| 4. Դր. Կոստան | 1,170. — |
| 5. Պետրոս Բեյ Գափամաճյան | 863.250 |
| 6. Առաքել Պելակերյան | 136.323 |
| 7. Ռ. Մարկոսյան | 494.900 |
| 8. Գ. Առզույան | 2,973.600 |
| 9. Ռւսումն. Բնկ. Փարիզ: | 694.389 |
| 10. Է. Հ. Հակոբյան | 1,368.034 |
| 11. Տ. Տ. Գըրգյաշարյան | 1,078.915 |
| 12. Տ. Զամբելթեն | 217.456 |
| 13. Մ. Միրզա | 1,086.376 |
| 14. Տիկ. Ա. Տարյան | 1,750.707 |
| 15. Ն. յեպիսկ. Դանիելյան | 379.722 |
| 16. Տիկ. Կ. Լիմոնճելի | 3,924.268 |
| 17. Մ. Գաղանճյան | 426.020 |
| 18. Ա. Թոփոլյան | 175.309 |

| | | |
|-----|-------------------|------------|
| 19. | Ա. Թագվորյան | 200. — |
| 20. | Ա. Դավթյան | 315. — |
| 21. | Վ. Պապայան | 1,124.807 |
| 22. | Ա. Փափազյան | 100. — |
| 23. | Մ. Մոբյան | 582.816 |
| 24. | Նիկոսիո հիմնադրամ | 56.250 |
| 25. | Անի Ընկ. (Վիեննա) | 21.883 |
| 26. | Գ. Հակովյան | 22,639.232 |
| 27. | Մ. Սամվելյան | 4,113.171 |
| 28. | Հ. Աղմամյան | 99.716 |
| 29. | Մ. Արվոյան | 336.247 |
| | | <hr/> |
| | | 59,723.039 |

1925 թվի տեղեկագրի մեջ «մասնավոր գրամագլուխութեաբանի» գումարը հասնում է արգեն 77,017 յեղիպտական գումարու:

Այս գումարներից շատերը, արգեն գործադրվում են, ինչպես որինակ՝ վերը հիշված յերեք կտակները:

Սակայն չի կարելի նույնը ասել բոլորի նկատմամբ:

17. ԶԱՆԱԶԱՆ ԿՏԱԿՆԵՐ

Այսուհետեւ կան ուրիշ մի շարք կտակներ, վորոնց հետ ի մոտո ծանոթանալու հասրավությունը չունեցանք մենք և վորոնց գումարները կրկին բավականին խոշոր չափերի են հասնում:

Դրանց թվին են պատկանում, որինակ՝ այն բոլոր կտակները, վորոնք արված են զանազան հայերի կողմից Միսաֆոնարների Ամերիկական Բորտ Բնկերությանը (American Board of Commissioners for Foreign Mission) և վորոնք մինչեւ որս մնում են անգործադիր:

Այդ մասին Ամերիկահայ մամուլը հաճախ իր ձայնն և բարձրաբերլ վերջերս թե «Հայաստանի Կոչնակ» շաբաթաթերթը և թե Ֆրեզնոյի «Մշակը» հասուլկ հոգվածներ նվիրեցին այդ ինպրին. պահանջներով վոր այդ ընկերությունը հաճի «իր քուլը հայ կտակներով ավանդ կեցած դրամը գործածել հայ թոքախտավորներու և բունավեր տառապլայներու համար»:

Իսկ այդ դումարներն ամեննեին արհամարհելի մեծություններ չեն:

Այսպես ըստ այդ թերթերի Ասլան Սահակյանը թողել և 80,000 դոլար (բացի 22 տարվան տոկոսները), Արդգիս Թելֆեյանը՝ 124,000 դոլար, Հովհաննես Տոնչյանը՝ 100,000 դոլար և այլն.

Վերջերս Հոնգկոնգում վախճանվեց Սըր Պոլ Չատրը, յերեխ Պողոս Խաչատրյան, անունով մի հայ: Նա համարվում էր քաղաքի ամենահարուստ մարդկանցից մեկը: Իւ ամբողջ կարողությունը. վոր թերես մի քանի մելիոն ռուբլու և հասնում կտակով թողել է քաղաքի մի շարք սննդիական հիմնարկներին, իսկ մեծագույն մասն իր անժառանգ կոնջը. վորի մահից հետո պիտի անցնի տեղական հայ յեկեղեւուն:

Հայոնի և Մուրագ Ռաֆայելյան խոշոր կտակը, վորի գործադրության առթիվ բավականին տարածայնություններ կան Վենետիկի Միթարյան Սիարանության մեջ:

Բազմաթիվ կտակներ կան Տաճկաստանում. վորոնց համար նույնիսկ Պատրիարքարանին կից Պոլսում, կա հատուկ «Կտակների Հանձնաժողով», կտակներ կան նաև Յեղիպտոսում, Հնգկաստանում և այլն:

Կրկնում ենք. այս բոլոր կտակները մեր ներկա փոքրիկ ուսումնասիրության շրջանակից զուրս մնացին նյութերի բացակայության պատճառով:

Բ. ՆՎԻՐԱԾՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

18. ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՎԻՐԱԾՎՈՒԹՅՈՒՆ

Նվիրատվությունների մեջ ամենախոշոր գործը պատկանում է յեղբ։ Մելքոնյաններին։

Գրիգոր և Կարապետ Մելքոնյան յեղբայրները ընթիկ կեսարացի յեն, յոթանասնական թվականներին տեղափոխվել են Ռումինիայի Ֆոքշան քաղաքը և ապա Յեզիդոսի Աղեքսանդրիս քաղաքը առևտրական գործերով։ Ռումանական թվականներին հիմք են դրել Յեզիդոսությունը ծխախոտի գործարաններն, վոր իր արտագրությամբ յերկրորդ տեղն է բռնում Մաթոսյան առևտրական տնից հետո։

Յերկու յեղբայրներն ել անժառանգ են։

Մելքոնյան նվիրատվությունը իր 6 միլիոն ռուբլու հասնող գումարով բավականին խոշոր յերևույթ և արտասահմանի հայ իրականության մեջ։ Նա միևնույն ժամանակ իր նախատեսած նպատակներով, հատկացրած գումարների գործադրությամբ և մանավանդ իրավատերի խնդրով առիթ և ավել շատ յերկար վիճարանությունների։

Խորհրդային Հայաստանի կառավարության տրամադրության տակ կան բավականին փաստաթղթեր, վորոնց հրատարակությունը վերջնականապես պիտի լուսաբանի այդ խնդրու։ Այդ գրությունները տեղի յեն ունեցել կո-

բապետ Մելքոնյանի, նրա փաստաբաններ կարող Պալյանի, Զոհրաբի և մյուս կողմից Հայաստանի նախկին գաշնակց. կառավարության պատասխանատու ներկայացուցիչների՝ Ահարոնյանի, Խատիսյանի, Ռհանջանյանի, Թահթածյանի միջև:

Համենայն գեղս մի բան պարզ է, վոր Մելքոնյան նվիրատվությունը իր սկզբնական շրջանում, ծրագրված էր հանձնել Հայաստանի կառավարությանը, Հայաստանի մեջ գործադրելու համար:

Առաջին դիմումն այդ խմասառվ անում է ինքը, նվիրատու յեղայրներից մեկը, կարպետ Մելքոնյանը: Իր յեղբոր Գրիգոր Մելքոնյանի վասնգավոր հիվանդությունն ու վերահստ ման աչքի տուաջ ունենալով, նա, 1920 թվի փետրվարի 29-ին, դիմում է Փարիզ, Հայկական զույգ սպատվիրակությունների նախագահներ՝ Պողոս Նուռար Փաշալին և Ազ. Ահարոնյանին մի գրությամբ և, հաղորդելով իր և իր յեղբոր կամքը, խնդրում է, վոր նրանք միջնորդեն և Յերևանից ստանան իրենց համար Հայաստանի հպատակության անձնագրներ:

Այդ գրության ի պատասխան Հայաստանի դաշնակցական կառավարությունը, 1920 թվի մայիսի 26-ին, ընդունում է հատուկ որենք, վորով Մելքոնյան յերկու յեղայրներին հետին թվով, այսինքն 1919 թիվ մայիսի 28-ից, համարում է Հայաստանի հպատակներ և ուղարկում նրանց համապատասխան գրություններ հետեւալ բովանդակությամբ.

«Տրվում է Հայաստանի քաղաքացիության սույն թուղթը Տաճկահպատակ համարվող, բնիկ Կեսարացի, այժմ Աղեքսանդրիա (Յեգիպտոս) բնակվող հայ ազգի պ. Գրիգոր Մելքոնյանին առ այն, վոր նա, համաձայն 1920 թվի մայիսի 26-ի որենքի, ընդունվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի 1919 թիվ մայիսի 28-ից, վորը

հաստատվում եւ ստորագրությամբ և հանրապետության
կողքով:

Վարչապետ և Արտ. Գործ. մինիստր՝ Համ. Ոհան: Չանցան,
Մինիստրների և որհրդի Գործերի ապրիչ Գ. Խոջամիրյան»
Նույն բովանդակությամբ մի թուղթ ել ուղարկվում
և Կարապետ Մելքոնյանին

յդ գեռ բավական չե:

Հայաստանի այն ժամանակվա կառավարությունը
պետության անունից անձագիրներին կցում եւ և մի շնոր-
հակալական թուղթ Հաստանի նոր հպատակների «առա-
տաձեռն նվիրատվության» համար:

Ենվ այնուհետեւ այն հառողումը, վոր Մելքոնյան
նվիրատվության միակ իրավական տերը Հայաստանն եւ,
այնքան ուսեղ ել լինում է երեանում, վոր յերբ լուր ե
ստացվում յեղաքներից մեկի, Գրիգորի մահվան մասին,
Սրաքին գործերի մինիստրը, 1920 թվի հունիսին, ու-
ղարկում եւ Բաթում իր հատուկ լիազորություններով
ոժագած ներկայացուցիչ Սլ. Խատիսանին հետեյալ նշա-
նակալից հեռագիրը.

«Կառավարությունը լուր ստացավ, վոր Գրիգոր Մել-
քոնյանը վոր կտակել ել յոր կարողությունը Հայաստանի
Հանրապետության, վախճանվեց Աղեքսանողրիայում: Միա-
ժամանակ ուղարկում եմ Զեղ հեռազրական լիազորու-
թյուն ժամանակությունը ընդունելու, նմանապես պահպանու-
թյան միջոցներ ձեռք առնելու համար .. կառավարու-
թյունն անհրաժեշտ եւ համարում, վոր դուք մեկնեք
Աղեքսանողրիա: (ընդունելումները մերն են՝ Կ. Մ.)»

Սակայն պարզվում եւ, վոր հանգուցյալ Գրիգորը վախ-
ճանվելիս կտակ չի գրել և իր կամքը հայտնել ել յեղ-
բորը բերանացի կերպով:

Մի տարի անց, 1921 թվի հուլիսի 25-ին, Կարապետ

Մելքոնյանը կազմում է նվիրատվության մի ակտ, համաձայն վորի իր և յեղբորից մնացած ամրողջ կարողությունը հատկացնում է Տաճկաստանում և Կիլիկիայում 3 հայկական դպրոց պահելու հայ որիորդների և պատանիների համար:

Իզմիրի գրավումից հետո, 1924 թվի մայիսի 19-ին, կազմում է մի նոր ակտ, ուր իրավունք եւ տալիս բանալ վորբանոցներ և դպրոցներ այն տեղերում, ուր կտակակատարները կզտնեն իրավացի:

Իսկ կտակակատարն եր Պոլսի պատրիարքարանը:

Սակայն կտակակատարները փոխանակ վորբանոցները բանալու այնանեղ, ուր ապրում է հայ աշխատավոր ժողովուրդն իր բնաշխարհիկ հայրենիքի մեջ վորոշում են բանալ Կիպրոս կղզում, ուր անգամ հայկական գաղութ չկա:

Ցեղ ահա Կիպրոս կիսամայի կղզու վրա կանգնեցնում են մի հոյակապ ապարանք վորբերի համար, վոր նստում է 500—600.000 սուրբի և վորը միևնույն ժամանակ գաւռնում է համեղ պատառ ամենազաղիք զեղծումների, վորոնց տիրահռչակ հերոսն է հանդիսանում Մուշեղ Սերոբյան հետագայում արտաքսված, յեպիսկոպոսը:

Նվիրաբերած գումարի այդ անիմաստ գործադրության առիթով արտահայտված հասարակական վրդովված կարծիքը մի կողմից, կտակակատարների ապիկարությունը մյուս կողմից և վերջապես Կ.-Պոլսի Պատրիարքարանի քաղաքական անկայուն վիճակը յերրորդ կողմից պատճառ դառնան, վոր. 1925 թ. գեկտեմբեր 28-ին, Աղեքսանդրիայում կազմվի մի նոր ակտ և այդ ամրողջ նվիրատվությունը վոխանցվի մի այլ հիմնարկության, վորպիսին ընտրվում է Հայ Բարեգործական Միացյալ Ընկերությունը:

Բայ այդ ակտի Բարեգործականին անցնում է՝

1) Աւել կալվածք իրենց շենքերով, վորոնք ունեն 58.400 յեղիպտ. վոսկու գնահատություն,

- 2) Կիսպոս կղզու վրա շինած փորբանոցը,
- 3) Կահիրեցում գտնվող կ. և Գ. Մելքոնյան Բնիերության ծխախոտի փորձարանը, իր միջի յեղած ազրանքներով,
- 4) Արժեքավոր թղթեր 292.500 յեղիպտական վոսկուգումարի,
- 5) Մեքենաներ և գործարանի պարագաներ,
- 6(Կահկարասիներ, վորոնկը գտնվում էն Մելքոնյան առևտության հասաւառության մեջ,
- 7) Ստանալիքներ, պարաբերը դուրս գալուց հետո, 68.992 յեղիպտական վոսկուգ
- Այդ ամբողջ կորողությունից ստացած յեկամուտը բարեգործականը պարտավորվում է գործադրել հետեւյալ կերպով՝
- 1) Մելքոնյան անունով պահել յերկու դպրոց և կամ վորբանոց, մեկը արանց, իսկ մյուսը կանանց, վորն արդեն հիմնված և կիսպոսում է ինսամել մաքսիմում 500 տշակերտա.
 - 2) Տարեկան 1000 յեղիպտական վոսկի տակ Յերևանակեմի պատրիարքին, Յերևանադեմի դպրոցում Մելքոնյան անունով աշակերտներ պահելու համար:
 - 3) Տարեկան 1000 յեղիպտ. վոսկի* տակ Պոլսի հայոց պատրիարքարանին, վորպեսզի նա այդ զրամը գործադրի հետեւյալ կերպով — Այդ զրամի կիսով Պոլսի Հայոց հիւանդանոցում պահի մահճակալներ, մի չորորդն հատկացնի փորեե բարեգործական նպատակի, իսկ մյուս մի չորորդը՝ պատրիարքարանի կարիքներին.
 - 4) Տարեկան 3000 յեղիպտ. վոսկի տակ Հայաստանի Յերևանի Համալսարանին, վորպեսզի այդ զրամով ուսուց-

*) Այս 1000 յեղիպտական վոսկին վերջին 1927 թվի կազմած նոր արձանագրության համաձայն բարեգործական և 1500 վոսկին

վի Հայաստանի Համալսարանում Հայոց զրականություն
և պատմությունն: «Կրկնում եմ, վոր իմ իղձն ե, վորպեսզի
այդ զրամը իր նպատակին ծառայի», ասում ե նվիրատուն:

6) Յեթե յեկամուարը բավականանա, այն գեպքում
ցանկալի յե հիմնել արհեստի և արվեստի մի գոլոց, վորի
մեջ ամփոփել ե մի տպարան, վորտեղ հրատարակեն հա-
յերեն զրքեր.

6) Պահել ուսանողներ Յեվրոպայի գանագան համալ-
սարաններում.

7) Ազնել կիպրոսի հայ զպրոցներին:

«Յանկալի յե, վոր հիմնիլ Մելքոնյան մի ֆոնդ և գրա-
մագլուխը պահիլ ամերիկյան կամ անդինական բաներում,
վորոնք համարվում են վստահելի և միայն այդ ֆոնդի
տոկոսները գործադրվի, ինչպես մատնանշեցի»:

Ահա վոխանցման և կտակի հիմնական կետերը:

Այս նշանագոր նվիրատվության խոյելի կողմը բարո-
յական և քաղաքացիական տեսակեաններից այն ե, վոր
չնայած այն հանդամանքին, վոր նա իր սկզբնական շրջա-
նում ունեցել ե ուժեղ արամազրություն Հայաստանի մեջ
գործադրվելու, վերջերը ընդունել ե զարութային բարե-
գործական բնույթ:

Նրա 20.000—30.000 վոսկի յեկամուտիդ Հայաստա-
նին, վոր պիտի լիներ նրա միակ իրավաերը, բաժին և
ընկել ընդամենը ամբողջ յեկամուտի մի տասերը որդական
մասը միայն:

Յերկրի վերաշնուրթյան հսկայական գործի համար
այդ խոշոր նվիրատվությունը, վոխանակ պատկառելի դեր
խաղալու, դառնում ե մի չնչին ազդակ ու այլպիսով
կորցնում իր պատմական իմաստը, վորի ամբողջ պատաս-
խանատվությունը ծանրանում ե այն «ներշնչողների» վրա,
վորոնք շրջապատել են զառամյալ նվիրատուններին:

19. ՄԱՐԻ ՆՈՒԹԱՐԻ ԱՆՎԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Այս հաստատության պատմությունն ունեցել է բավականին յերկար առաջարան:

Բարեգործականը վերջերս սիրում եր կրկնել, թե ի՞ր գործնեյության ասպարեզն ուղում ե փոխազրել Խորհրդային Հայաստան:

Առիթը տվեց Նիրահառնի իֆը, յերբ 1923 թվին, 20.000-ի չափ վորբեր արձակելով իր վորբան ցներից յըեց աշխարհի չորս կողմը:

Այդ գժբախտներին Խոր. Հայաստանի մեջ ապաստարան տալու համար Խորհ. Հայաստանի կառավարության հետ խորհրդակցության մտավ Բարեգործականի բարերար անդամ Յես. Կարիկյանը, վոր այդ թվին յեկել եր Խոր. Հայաստան:

Նրանց բնակության համար իրեկ հարմար վայր նա ընտրել եր Յեղվարդի և Դալմայի 8000 դեսյատինի չափ բերբի, բայց անջրտի հողերը, վորոնց վոռոգման ծարսը կարող եր վերցնել Բարեգործականը:

Այդ նպատակի համար նա նախատեսել եր՝ 25.000 անգլ. վոսկի զլիս. ջրանցքը անցկացնելու համար և 20.000 անգլ. վոսկի ել առաջին 1000 դեսյատինի վոռոգման ծախսերի համար:

Կառավարության բարյացակամ հավանությունն ու մի շարք արտօնություններ սահմանալուց հետո, Կարիկյանը հաղորդեց իր առաջ ողբած ծրագիրը Բարեգործականին, վորի Նախագահից սույն թվի նոյեմբերին ստացավ հավանության և շնորհակալության հեռազիր:

Հետեւալ տարին, այդ ծրագիրը տեխնիքապես ուսումնասիրելու համար, Բարեգործականն ուղարկեց մի առաքելություն՝ հանձինս և. Բաշալյանի և ճարտարապետ

Գ. Ասատուրի, վորոնք ընդունելով կարիքանի նախատեսած ծախոերը, միհնու յն ժամանակ հողերի ամբողջական վոռողման համար անհրաժեշտ համարեցին 75.000 անգլ. վոսկի:

Սա մի զեղեցիկ առիթ էր Բարեգործականի համար, իր ցանկությունն իրագործելու, սակայն մի ամբողջ տարի հարցը «ուսումնասիրելուց» հետո, 1924 թվի դեկտ. 12-ին, նրա նախագահից Հայաստանի կառավարության անունով յեկավ մի զրություն, թե ընկերությունը ֆալմայի հոգերի վոռողման համար անհրաժեշտ 75.000 վոսկին տրամադրելի չի գտնում իր համար։

Կարծես, իրքի փոխարինություն այդ ծրագրի, նույն արտասահմանյան «անհայրենիք» վորքերի տեղափորման համար, Բարեգործականը, 1925 թ. հունվարի 10-ին, Հայաստանի կառավարության անդամ Ա. Յերզնկանի հետ կընթեց մի պայմանագիր, վորով հանոն առավ Յերևանի մոտ գանվող Նենդավիթ գյուղում շինել մի վորբանոց։

Այդ պայմանագրության հիմնական կետերը սրանք են.

Հայաստանի կառավարությունը ձրիաբար, 15 տարի պայմանագագագով Բարեգործականի տրամադրության տակ է դնում Շենգավիթ գյուղում 99 դեսյատին հող՝ 200—250 վորքի համար վորբանոց շիներու և այդ հողերը վորբերի ձեռքով մշակելու համար։

Բարեգործականի շենքերն ու հողերը աղաս պիտի լինեն պետական ամեն մի տուրքից։

Բացի այդ Բարեգործականին տրվում է քաղաքի մեջ, ձրիաբար և ընդմիշտ, հարմար հողամասեր իր համար, իր միջոցներով հասույթաբեր տներ կամ խանութներ կառուցանելու և արդյունքը վորբանոց ին հատկացնելու համար։

Վորբանոցը կառավարում է Բարեգործականի կողմից նշանակված լիազորը, վորին հաստատում է Հայաստանի կուսակորության կոմիսարիատը։

15 տարին լրանալուց հետո Բարեգործականի վորբանոցն իր հողամասով և շենքերով անցնում է Հայաստանի կառավարությանը:

Բարեգործականը պարտավորվում է իր շինությունները սկսել վոչ ուշ, քան 1925 թվի հունիս ամիսը:

Այդ հանձնառությունը Բարեգործականն ապահովում է իր ամրող ստացվածքով և զբաժապլիտով, իսկ Հայաստանի կառավարությունը իր հերթին յերաշխավորում է, վոր ներկա պայմանագիրն անփոփոխ պիտի մնա սահմանած ժամանակաշրջանի ընթացքում:

1925 թվի հուլիսի 25-ին, Բարեգործականը մի նամակ է ուղղում Փարիզ՝ Հայաստանի կառավարության ներկայացուցչին և հաղորդում, թե Միության նախագահ, Պողոս Նուպար Փաշան՝ վորոշած լինելով վորեն բարեգործական հաստատությամբ Հայաստանի մեջ հայերժացնել իր հանգույցալ ամուսին Մարի Նուպարի հիշատակը՝ Շենգավիթի վորբանոցի կառուցման համար հատկացնում է 400.000 ֆրանկ (5000 վոսկի), պայմանով, վոր այդ վորբանոցը կրի հանգույցալի անունը: Հունվարի 10-ի պայմանագրության մյուս բոլոր կետերը Բարեգործականն իր համար պահում է անփոփոխ: Յեթե Հայաստանի կառավարությունն իր առաջարկին առարկություն չունի, այն ժամանակ Բարեգործականը, վորբանոցի շինության համար իր նախատեսած գումարը, այսինքն 5000 վոսկին, անմիջապես, կփոխադրի Հայաստանի կառավարությանը՝ Հունաստանից Հայաստան տեղափոխվող գաղթականների փոխադրման համար:

Կառավարության ներկայացուցիչն այդ առաջարկին պատասխանում է զբական խմանով:

Հայաստանի Տեխնիքական Գերազույն Խորհրդի նախագահ Ակադեմիկոս Ա. Թամանյանը, 1926 թվի հունվա-

րի 29-ի նամակով, հաղորդում ե Բարեգործականին, վոր Պողոս Նուպար Փաշայի տրամադրած 400.000 ֆրանկով անկարելի յէ վորբանոց-ավան կառուցանել։ Ըստ ուղարկութած նախահաշվի նա այդ վորբանոցի կառուցման համար անհրաժեշտ ե համարում 135,000 ռուբլու ծախք (մոտ 1.700.000 ֆր.)։

Պողոս Նուպար Փաշան ստանալով այդ նամակը համաձայնում ե իր խոստացած դումարին ավելացնել ևս 200—250.000 ֆրանկ, սակայն վոչ ավելի։

Այս բոլոր բանակցությունների հետևանքն յեղավայր այն, վոր Պողոս Նուպար Փաշան, իրեւ նախագահ Բարեգործական Ընկերության, վերջինիս Շենգավիթի վորբանոցի համար նախաստեսած 5000 անդիմական վոսկին փոխազրեց Հայաստանի կառավարությանը Հունաստանի գաղղթական-ների տեղափոխության համար, իսկ իր միջոցներից, իր կողմանը Մարի Նուպարի հիշատակին, վորոշեց Յերեանի մեջ կառուցել մի ակնաբռնժական հիվանդանոց 70,000 ռուբլու սահմաններում ե տրամադրել Խոր. Հայաստանի Ասողջապահության ժողովրդական կոմիսարիատին։

Պայմանագիրը Հայաստանի կառավարության հետ կնքվեց 1927 թվին, Պողոս Նուպար Փաշայի ներկայացուցիչ ինժ. Մ. Միհրզադյանի ձեռքով։

Այսպիսով ջուրն ընկավ Յեղվարդի գտշաերի վոսողման ծրագիրը, վորով Հայաստանի մայրաքաղաքի մոտ գտնվող մի խոշոր հողամաս ծաղկյալ վիճակ պիտի ստանար, ջուրն ընկավ Շենգավիթի մեջ վորբանոց բանալու պայմանագիրը, վորով 250 վորը ապաստան պիտի գըտնելին իրենց հայրենի հողի վրա, իսկ Հայ Բարեգործական Ընդհանուր Միության ցանկությունը, իր գործնեյտմյունը տեղափոխել Հայաստան՝ մնաց «Ճայն բարբառ համապատի»։

20. ԳԱԼՈՒՍ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Լոնդոնահայ Գալուստ Խյուլպենկյանց 1923 թվին 50.000 դոլար և խոստացել Նիր Իստ Ռիվերֆին լավագույն կերպով զործադրելու հայ վորքերի համար:

Այդ նպատակն իրագործելու համար Նիր Իստ Ռիվերֆի (Մերձավոր Արևելքի նպատամատուցի) կողմից ընտրվում և մի հատուկ հանձնախումբ, վորի մեջ մանում են Նյու-Յորքաբնակ Գարագլուշանը, պատվելի Գալաճանը և միստր Աչքան: Դրանք վորոշում են կայազնում 250—500 հայ վորքուհիներին տեղափոխել Սիրիայից Կանադա և այսուղ աեղավորել ազարակների մեջ իրքն ազարիններ:

Այդ վորոշմանը, հասարակական կարծիքի ճշշման տակ, հավանություն չե տալիս նվիրատուն և հայտարարում և, վոր այդ գումարո պիտի հանձնի Խորհրդային Հայաստանին, այսուղ գործադրելու համար:

Լինում են մի շաբք առաջարկներ Ա. Յերդնկյանի և Հ. Ի. ի ու Կ. Խաչի պատվիրակության կողմից այս կամ այն նպատակի համար:

Վերջնական պատասխան նվիրատուից դեռ չի ստացված: Գումարը չե զործադրված:

21. ԲՈՅԱԶՅԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Այս նվիրատվությունն ունի իր դավեշտական կողմը:

Ա. Բոյա յան անունով մի զորդավաճառ Վենետիկց ցանկություն և հայտնում Հայաստանի մեջ շինելու մի մեղվարուժական դպրոց:

Այդ նպատակի համար Հայաստան և գալիս նրա լիա-

զոր Զոհրաբյանը և 1922 թ. Յերևանի մեջ կնքում ե մի պայմանագիր:

Բայս այդ պայմանագրի հայաստանի կառավարությունը ձրխարար տրամադրում ե դպրոցի համար նախկին ուռուսական կողակիների գորանուցը Ստավիանավաճում։ Բոյաջյանն իր հերթին պարտավորվում է դպրոցի նախնական ծախսերի համար հատկացնել 11,000 բուրլի, այնուհետեւ ընթացիկ ծախսերի համար՝ տարեկան 3,700 բուրլի մինչև վոր դպրոցը իր մեղմի փեթակներից ստացած յեկամուտով ինքնաբավ կը առնա:

Այդ դոհաբերությունը նշանավոր «բարերարը» հանձն ե առնում այն պայմանով, վոր նախ դպրոցի ճակատին մեծ տառերով գրված լինեն «Մեղվաբուծական դպրոց Տուն Ա. Բոյաջյանի» և յերկրորդ՝ իր մեծագիր լուսանկարը կախված լինի դպրոցի սրանի աշքի ընկնող տեղում։

Պայմանագրոված գումարից մոտ 1000 բուրլի Բոյաջյանի լիազոր Զոհրաբյանը ծախսում է դպրոցի շենքի նորոգության վրա։ Այնուհետեւ վենիսայից գալիս ե նախ «բարերարի» մեծագիր լուսանկարը, շենքում կախելու համար, ապա 2893 բուրլի՝ դպրոցի կահավորման և ընթացիկ ծախսերի համար։

Այսպիսով պատվիրվում են փեթակները, հրավիրվում ե, իրեւ դասատու, հայանի գյուղատնտես։ Ա. Բարխուդարյանը և ընդունվում են աշակերտներ։ Դպրոցի սպիտակ պատի վրա գծագրվում է մեծ տառերով Բոյաջյանի անմահ անունը, իսկ ներսը, սրահում կախվում է նրա յերշանկահիշատակ պատկերը։

Սակայն, անցնում են ամիսներ, Բոյաջյանից այևս լուր չի գալիս և վոչ ել դրամ, չնայած բազմաթիվ դիմումներին

Դպրոցը սկսվում է քայլայիկել։

Պարտատերերը հետ են վերցնում պատվիրած վեհթակները, ուսուցիչը մնում է ամիսներով առանց ոռճիկի, իսկ դպրոցի միակ ծառայողի ոռճիկը վճարելու և իր ուղարոցի մի քանի անհետաձգելի պարտքերը տալու համար, ինքնադո՞ւ ուսուցիչը, ապավինած բարերարի պարտաճառաչությանը, իրերի կացությունը փրկելու համար, ծախում և իր յերկու կովր...

Այս ամենը հայտնի յե լինում Բոյաջյանին:

Սակայն Բոյաջյանը կրկին լուս է, վորովհետեւ Բոյաջյանը սաստիկ զայրացել և ու դրա համարել չի ցանկանում դպրոցի մասին լսած լինել:

Ասում են զայրութիւնի պատճառն այն ե, վոր առանց նրան իմաց տալու, դպրոցի վարչությունը համարձակվել և ուսումնարանում... ժամացույց կախել:

Դողբոցն այժմ վակ է: Շենքի վրայից Բոյաջյանի անունը չնջված է, իսկ լուսանկարի վորտեկ գտնվելու մասին սուսայդ աեղեկություններ չկան:

Հետագա տեղեկությունները ցույց են տալիս, վոր հայ բարեգործի հռչակը հարկավոր եր նրան, մի ինչ վոր սպեկուլատիվ գործի համար:

Գ. ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՆ ԹՅՈՒՆՆԵՐ

22. ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐԵԳՈՐԾՎԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հասարակական մարմիններից իր գրամագլխով և կազմակերպությամբ արտասահմանի մեջ առաջին տեղն երըունում Հայկական Բարեգործական Բնդինանուր Միությունը:

Մի խումբ Յեղիստահայեր, ավնիվական և կապիտալիստ, վորոնց թվում՝ Պողոս Նուլպար Փաշան, Յակուպ Արթին Փաշան, Առաքել Բեյ Նուլպար, Յերվանդ Բեյ Աղաթոն և այլն, թվով 10 հոգի, Յեղիստասի Կայիրե քաղաքում, 1906 թվի ապրիլի 15-ին, Պողոս Նուլպար Փաշայի ապարանքում, հիմք դրին Հայկական Բարեգործական Բնդինանուր Միությունը:

Բոս նախատեսված ծրագրի, նրա հոգածության առարկան պիտի լիներ «հայրենի հողին կապված հայ ժողովուրդը» և այդ նպատակին ծառայելու համար իր կանոնագրի 1-ին հոգվածի մեջ դրված են հետեւյալ յերեք կետերը. —

ա) Մայր հայրենիքի և Փոքր-Ասյո հայ ժողովրդին մտավոր և բարոյական գարգացմանը նպաստել,

բ) Անոր նյութական և տնտեսական կացությունը բարվոքելու աշխատիլ և

գ) Այս արդյունքը հառաջ բերելու ծառայող վորեե ձեռնարկ և հրատարակություն քաջալերիլ:

Միությանը հետագայում հաջողվում ե ընդարձակել իր կազմակերպչական ցանցը և 1925 թվի տեղեկագրի համաձայն զանազան յերկրներում բաց ե անում 250 ճյուղ, վորոնցից շատերը պատերազմի հետևանքով փակվում են և մնում են գարձյալ 150 գործոն ճյուղ:

Անդամների թիվը համառում է 20,000-ի:

Միությունն այժմ վերածված ե զիլիցերական որենքներով հասատված մի Ընկերության: Կենտրոնական Վարչությունը գանձում է Փարիզում և ունի յերկու շրջանային հանձնաժողովներ, մեկը՝ Ամերիկայում, միյսուր՝ Յեղիպատում:

Կենտրոնական Վարչության անդամներն են՝

1. Պողոս Նուպար Փաշա. . . . Ատենապետցիանս
2. Գարբ. Իֆ. Նորատունկյան. Փոխ - ատենապետ
3. Յերվանդ Բեյ Աղաթոն. . . . "
4. Տիգրան Խան Քելելյան. . . . "
5. Քրիզոր Սինապյան. . . . Վարիչ անորեն
6. Լեվոն Կյումուշկերտան. . . Գանձապահ
7. Տ. Փլիփոսյան. . . . Խորհրդական
8. Միքայել Պալաջանյան. . . . "
9. Տիգրան Կամսարական. . . . "
10. Արամ Ճելինիրճյան. . . . "
11. Զարեհ Բեյ Նուպար. . . . "
12. Ա. Սվաճյան. "
13. Պողոս Եսմերյան. "

Համաձայն 20-ամյակի առթիվ հրատարակված իր պաշտոնական որշան «Միության» տվյալների, Բարեգործականը 1906—1926 թվականների ընթացքում մուտքի առւրքից, անդամակնարներից, կտակներից և նպիրտավու-

թյումններից հասույթ և ունեցել 614.057 յեղիպտական վոսկի կամ 3.070.289 դ լլար:

Միությունը, զբաժարկը մասն գումարն՝ ըից, ծախսնել և վորբերի, աղետյալների, վարժարանների, Հայաստանի ու ներքաղթի և զանազան հաստատությունների վրա իր ընդհանուր հասույթի 60%-ը, այսինքն 378,949 յեղիպտական վոսկի:

Առ 1926 Եկավը իր արաժապրոթյան տակ ունի պատրաստի գումարներ, իրեն:

| | |
|--|--------------------|
| 1. Հիմական զբաժապրութ | 51.915 յեղ. վոսկի |
| 2. Մասնավոր զբաժապրութն ը (Կոտակ-ներ ու նվիրատվություններ, . . . | 77.017 յեղ. վոսկի |
| Բնդամենը . . . | 128.932 յեղ. վոսկի |

Ուրիշ խոսքով, մոտավորապես մեկ միլիոն յերկու հարյուր հազար ռուբլի:

Դժբախտաբար նույն պաշտանական որդանից չի յերեքում թե ինչի վրա յե ծախսվել հասույթի մնացորդ գումարը, այն և 106.176 յեղ. վոսկին: Պիտի յենթազրել, վոր զա 20 տարվա ընթացքում յեղած կազմակե, պչական և զիվանական ծախսերն են:

Իսկ յերբ վերցնում ենք 20 տարվա հասույթների համապատասխան մասնավորը՝ 614.057 վոսկի, աեսնում ենք, վոր Հայաստանին, այսինքն այն, ինչ Միության հիմնական նպատակն է յեղել, 20 տարվա ընթացքում բաժին ե ընկել 51.298 յեղ. վոսկի, կամ յեկամուտի 8,4 %-ը, իսկ մնացած 562.759, կամ 91,6 % ծախսված են վորբերի, վարժարանների, աղետյալների և այլ ծախսերի համար՝ Միրիայում և Պաղեստինում և այլուր, ուրիշ խոսքով՝ Հայաստանի սահմաններից դուրս և կամ մնում են իրեն հիմնազբաններ և անձեռնմխելի գումարներ՝ կրկին Հայաստանի սահմաններից դուրս:

Վերջերս Բարեգործականը սիրում և հայտարարել

թե իր ողնության ասպարեզը ուղում և դարձնել «Հայլենի հողը» այսինքն՝ Խ. Հայտատանը:

Իր նույն պաշտոնաթերթի հոբելյանական համարում կոչ է անում.

«Յեթե կսիրեք զոհարերությամբ ծառայել Հայտատանի վերականգնումին և Հայության վերածնողին... և այլն՝ Զեր նպատը տվեք Հ. Բարեգործական Ընդհանուր Միության...»:

Այս հայտարարությունները պարտավորեցնում են: Խորհրդային Հայտատանը իրավունք ունի դրանց ուղղելու իր հարցաւմը.

— Ի՞նչ եք անում իմ անունով հավաքած գումարները և վորաեղ եք ծախսում...

23. ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Միացյալ Նահանգների մեջ բարձրագույն դպրոցների ուսանողներին զրամական ողնություն ցույց տալու համար 1906 թվականին հաստատվում է «Ամերիկահայ Կրթասերաց Ընկերությունը», վոր մինչև հիմա 150 ուսանողի յե աջակցել:

1922 թվի ոգոստոսին այդ Ընկերությունը վերակազմվում է «Հայ Կրթական Հիմնարկություն» անունով,

1924 թվին յերկրի որենքների համաձայն նա վերածվում է «Լոռովորացիայի» և իր հիմնական զրամագլխով, վորը հասնում է 200.000 դոլարի, գնովում է Զիկագոյի մեջ հասույթաբեր կալվածներ:

Այդ հիմնարկամի մեծագույն մասը՝ 150.000 դոլարը, Զիկագոյի գորգավաճառ Կարապետ Փուշմանի անձնական նվիրաբերությունն եւ ի հիշատակ իր յերկու վաղամենովի զավակների, 45.000 դոլարը նվիրաբերված և ի հիշատակ հանգուցյալ Տիրան և Հովհաննես Տոնճյանների, իսկ մաս-

յած 5.000 դոլարը մանր նվերներից եւ գոյացել:

Հայ կրթական Հիմնարկության խնամակալ վարիչ՝
ներն են՝

1. Միհրան Գարակյոյլյան, ատենապետ,
2. Խ. Կ. Պենսեյան, վոխատենապետ,
3. Կարապետ Փուշման, գանձապահ-քարտուղար,
4. Տիկին Կ. Թ. Փուշման, խորհրդական:

Զիկագոյի «Յունիբըն Թրըսթ» ընկերությունը, խնամակալ վարչության հետ գործակցարար, հիմնարկության գոյացած հասույթը գանձում է և նպատակներին գործադրում:

Հիմնարկության տարեկան հասույթը պիտի լինի վոչ
ողական քան 13.000 դոլար:

Նա ունի չորս նպատակ.

ա) Ողնություն ուսանողներին—փոխառվության ձեկ
տակ դրամական ոժանդակություն՝ բարձրագույն կրթական հաստատությունների մեջ սովորող յերիտասարդներին:

բ) Ողնություն պարբերական մամուլին: Ներկայումս Հիմնարկությունը աջակցում է «Հայաստանի Կոչնակ» շարաթեթերթին, վոր լույս և տեսնում Ամերիկայի մեջ:

գ) Հրատարակություն յեվ Մատենադարան: Հրատատարակել հայերեն շահեկան գրքեր, թե ինքնուրույն և թե թարգմանական, պահել սեփական գրատուն, ուր պիտի վաճառվեն հայերեն և անզլիերեն գրքեր և հավաքել հայերեն և հայոց մասին գրված ոտար հրատարակություններ՝ կազմելով մի կենտրոնական մատենադարան բանասերների համար:

դ) Ընկերային ծառայություն: Զանազան ձեռնարկներ հայ ժողովրդի նկարագիրը ազնվացնելու համար և դրախտության մատնիված հայերին ողնություն:

Հիմնարկության դրամագլուխը պիտի մնա Ամերիկայում, իսկ տոկոսները պիտի գործադրվեն Ամերիկայի հայության մեջ, հարմար պարագային առևուժ հայաշատ կենարոններում և մինչև անգամ Հայաստանում:

Հ. Ի. կ. և կ. է աչի պատվիր կությունը Ամերիկա գտնված ժամանակը, բանակցեց Հայ Կրթական Հիմնարկության վարչության հետ, վոր վերջնա իր տրամադրության տակ յեղած գումարների գործադրության վայրը դարձնի Խորհրդային Հայաստանը:

Այսպես՝ ուսանողների նպաստի գործում ի նկատի առնվին Հայաստանից յեկած ուսանողները, իսկ Հրատարակական մարզում խրախուսվեն Հայաստանի մոջ կատարվող հրատարակությունները:

Այդ բանակցություններին իրեն հետեանք Հայ Կրթթական Հիմնարկությունը, 1927 թվի վետրվարի 4-ի նամակով, հաղորդում է Հ. Ի. կ. Գլխավոր Վարչությանը, վոր՝

1) «Ուսանողներու մասին կարգադրությունները մեր կողմեն լրացան և այդ նպատակով Հայ Կրթական Հիմնարկությանս վարչությունը 1000 դոլար քվեարկեց Պետ. Համալսարանի վարչության արամադրել իր կողմե կարգ մը ուսանողաց թեքնիքական, բժշկական կամ գյուղատնտեսական դասընթացի ծախոց ի հաշիվ»:

2) «Հայ գեղջուկ յերգերու հրատարակության համար ևս Պետական Յերաժշտանոցի վարչության առ այժմ վոր՝ ի համար միայն, արամադրեցինք 300 դոլար, անով մեկ կամ յերկու պրակ 1000-ական որինակ հրատարակելու նպատակով»:

Հատկացումները քիչ են, սակայն սկիզբը դրված եւ

24. ԴՐԱՄԱԿԱՆ ՏԻԿԱՑ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցակը Տիկնաց ընկերությունը իր գործունեյությունը սկսել է Կ.-Պոլտում, 1879 թվին, բանալով Հայաղիկների վարժարան՝ ուսուցիչներ պատրաստելու նպատակով:

Քաղաքական դժբախտ իրադարձությունների հետեւ վանքով՝ ընկերությունն իր գործունեյությունը փոխազրում է նախ Հունաստանի Սելանիկ քաղաքը և ապա 1924 թվի հոկտեմբեր 1-ից իր վարժարանով հաստատվում է Մարսյել քաղաքում, ուր ունի բավականին բնագարձակ շենք:

Դպրոցն ունի յերկու ճյուղ՝ նախակըթարան և արհեստանոց:

Կըթական ճյուղում սովորում են 175 աշակերտուհներ, իսկ արհեստանոցի մեջ՝ 150:

Աւանեն պատրաստի դրամագլուխ ֆրանսիական ֆրանկով 900.000-ի չափ գումար, զորի մեջ մտնում է և Ամերիկայում հանգանակած 18,884 դոլարը:

Այս գերջին գումարը Դպրոցակը Տիկնաց ընկերության Վարչությունը նախնական բանակցություններից հետո իր, 1925 թ. գեկտեմբեր 28-ին, ՀՈԿ-ի և Կ. Խաչի Պատվիրակության ուղղած նամակի համաձայն պատրաստակամություն են հայտնում Հայաստանում կտուցանել մի քանի զյուղական գպրոցների շենք:

Այդ մաաղբությունը նա հետադայում փոխեց, վորոշելով կառուցանել մի շենք, միջնակարգ գպրոցի համար, Յերեանի մեջ, 20.000 դոլարի սահմաններում:

Այդ իմաստով ընկերության ներկայացուցիչը, Մ. Միհրաղատյանը, 1927 թ. փետրվար ամսին, Խորհրդային Հայաստանի կառավարության հետ կնքեց մի պայմանագիր:

25. ՏԵԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ

Տաճկահայ գրականագետ Տիգրան Կամսարականն իր կենդանության որով հատկացրել եւ գրական մրցանակների համար 2.090 անգլ. վոսկի, վորը կտակով պիտի հանձրնո՞ի չ. Բարեգործական Միությանը: Այդ տոկոսներից 10-ը սահանալով իր վարչական ծախքերի համար՝ 90% ը ամեն տարի Բարեգործականը պիտի դնել Հոյաստանի Կառավարության տրամադրության տակ վերոհիշյալ նովատուկի համար:

Առաջին նվազ Տիգրան Կամսարականը, 1924 թվին, Հայաստան յեկած Լ. Բաշալյանի միջոցով, ուղարկում է 30 անգլ. վոսկի և հանձնարարում եւ նրան կնքել Խորհրդային Հայաստանի Լուսավորության ժողովրդական Կոմիտարատի հետ պայմանագիր: Պայմանագիրը կնքվում է 1924 թ. հոկտեմբերի 25-ին, հետեւյալ կերպով:—

1. Հ. Ա. Խ. Հ. Լուսավորումատը յուրաքանչյուր փետրը վարին հայտարարում եւ հերթական մրցանակարաշխություն, վոր տեղի յեւ ունենում մայիսին, հետեւյալ պայմանակերով:

2. Մրցանակը պիտի տրվի հեղինակներին դուռ գրական յերկերի համար, վորոնը կարող են լինել վեպ, պատմվածք, պոյեմ կամ թատերագրություն: Մրցանակը տրվելու յեւ մեծ մասամբ միջոցներից գուրկ կամ համեստ միջոցներ ունեցող հեղինակներին:

3. Մրցանակի նպատակն եւ:—

ա) Տպագրական ծախքեր հայթայթել տաղանդավոր սկսնակների յերկերի համար,

բ) Սկսնակներ չլինելու դեպքում հայթհայթել հին գրականագետների յերկերի տպագրության ծախքերը,

գ) Վարձատրության արժանի ձեռագրի բացա-

կայության դեպքում մըցանակը հատկացվելու յե արդեն տպագրված յերկերի համար:

դ) Յեթե հիշյալ յերկերի 3 կարգից և վոչ մեկը չլինի, մըցանակը պետք է հատկացնվի մի վորեւ հեղինակի իր յերկերի ժողովածուի համար:

4. Բոլոր հեղինակները անկախ նրանից, թե Հայաստանի սահմաններում են ապրում, կամ նրանից դուրս՝ իրավունք ունեն մասնակցելու մըցանակին:

5. Մըցանակի բաշխումը կատարում ե պարագրաֆ 5-ում հիշված պայմաններով, Խորհրդային Հայաստանի լուսժողկոմատի կողմից նշանակված և 5 անդամից բաղկացած ժյուրին: Ժյուրիի վորոշումը հաստատում է լուսժողկոմատը:

6. Ժյուրին իրավունք ունի մըցանակը բաշխելու յերկու հեղինակների միջև, ինչպես նաև բացառիկ պայմաններում կարող ե մըցանակի հատկացումը հետաձգել հաջորդ տարվան և յերկու մըցանակները միասին հատկացնել:

26. ՅԵՐՎԱՆԴ ԱՂԱԲՈՆԻ ՄՐՑԱՆԱԿԸ

Յերվանդ Աղաթոն բեյը, Բարեգործական Միության հիմնադիր անդամներից մեկը, Հ.Ս.Խ.Հ. Հողագործության կոմիսար Ա. Յերզնկյանի հետ կնքած պայմանագրի համաձայն, 1925 թվից մինչև մահը տարեկան հատկացնում ե 50 անգլ. ֆունտ ստերլինգ, բաժանելու համար Հայաստանի գյուղացիներին իրեւ մըցանակ լավագույն գյուղատնտեսական արտադրությունների համար, հետեւյալ կերպով:

- 1) 5 անգլ. վոսկի՝ ցորենի առաջին մրցանակն ստացողին,
 2) 5 » » δիսալսոտի » » »
 3) 5 » » շերամի բոժոժների ա. մրց. »
 4) 5 » » լավագույն բամբակին արտադրողին,
 5) 5 » » լավագույն մաքին ցուցադրողին,
 6) 5 » » » իսոյլ
 7) 5 » » » այծլ
 8) 5 » » » նոխաղլ
 9) 5 » » » տեղակ. ցուլլ
 10) 5 » » » տեղան. կովլ
-

27. ԳԱՐԱԿՅՈԶՅԱՆ ՀՈՄ

Հայտնի միլիոնատեր, Նյու-Յորկ քաղաքի բնակիչ, Միհրան Գարակյոզյանը, 1921 թվին կ. Պոլսում, ի հիշատակ իր 14 տարեկան հասակում վախճանված վորդու՝ Հառլըրդի, բացեց մի «հոմ» (տուն), ուր ապաստան պիտի գտնելին ու դաստիարակվելին հայ վորբերը:

Սակայն տաճկաց կառավարությունը շուտով փակեց այդ վորբանոցը, իբրև մի հաստատություն, վոր վարժարանի բնույթ եր կրում:

Վորբանոցի հիմնադիրը, այդ դեպքից հետո, վորոշեց իր հիմնած հաստատությունը փոխադրել ավելի ապահով տեղ, և 1924 թվի նոյեմբերի 5-ին, Հոմը, իր 80 սաներով, փոխադրեց Ֆրանսիա:

Գարակյոզյանն այդ նպատակի համար, Փարիզից մի քանի ժամ հեռավորության վրա դանվող Լազողինիյեր անտառում, վոր գտնվում է Լուար-ե-Շեր նահանգի Լավիլ-ո-Լերկ գյուղի մոտ, գնեց մի հոյակապ դղյակ, և

հարեից բաղկացած։ Այդ դղյակը շինված է յեզել 1865 թվականին, ժամանակի ամենավարթամ դուքսելից մեկի ձեռքով և ճակատին մակագրված եր «C'est mon plaisir» («Իմ հաճույն եւ այս») նշամարանը։

Գսելով հաճույքի և վայելքի համար շինված այդ դղյակը, Քարակյուղանը հարմարեցրեց վորանոցի համար, ծախսելով նրա գնման և նորգությունների համար մոտ 2 միլիոն ֆրանկ։

Այժմ Համբ ունի 102 վորք, թեև շենքը նախատեսնըված է 150 հոգու համար։

Յերեխաներն ապրում են այդ դղյակում իրեն զիշերովիկներ և նույն տեղն ել ստանում իրենց կրթությունը։

Դպրոցական մասը բաղկացած է 6 զասարանից և հանձնված է մի համալսարանավարտ և յեկեղեցական քարոզչ ֆաստիացու ղեկավարության։ Դասավանդությունը կատարվում է ֆրանսերեն և հայերեն լեզուներով, շաբաթը 5 որ, իսկ մի որ ել հատկացրված է գործնական աշխատանքների։ Շաբաթ յերեկոները աեղի յեն ունենում հավաքություն, կինո, ֆոնոգրաֆ, հանգեաներ և զիշերային խարույկներ ու զվարաններ։ Զի մոռացված փուղբուլը, թենիսը, մարզական խաղերն ու հեծանիվը։

Հոմի տարեկան ամբողջ ծախսը հոգում է Միհրան Գարակյողանը։

1925 թվին Հոմին ունեցավ 15 շրջանավարտ, վորոնք, Հոմի իսկ ջանքերով, տեղակորպիցին ֆրանսիական զանազան հաստատությունների մեջ։

Գարակյողան վորբանոցը, այն չափով, ինչ չսփով վոր գտնվում է Խորհրդային Հայաստանի սահմաններից դուրս, լավագույն ձուլարանն է հայ մանուկներից ֆրանսիական բուքժուազիայի համար որինակելի ծառաներ պատրաստելու...»

28. ՀԱՅ ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

(Հիմնարկություն Պողոս Նուպար Փաշարի)

1924 թվի մայիսին, Պողոս Նուպար Փաշան 16,000 անգլ. վոսկի և մտղնում առաջնակարգ արժեթղթերի մեջ և հանձնում Լոնդոնի Բարկլեյ Բանկին (Barklay's Bank Lmt.) իրեւ մշտնջենական ֆոնդ, վորի տոկոսներից համալսարանական մասնագիտություններ սովորելու համար թոշակներ պետք և ստանան արժանավոր ուսանողներ, պայմանով, վոր ավարտելուց հետո դնան Հայաստան:

Թոշակների բաշխման դործի համար ստեղծվում է Բրյուսելում մի կոմիտե, վոր կոչվում է «Œuvres des boursiers Arméniens, Fondation Boghos Nubar Pacha» բաղկացած 5 հոգուց: Այդ 5 հոգուց մեկին նշանակում է ինքը, հիմնադիրը, յերկուսը ընտրվում են Բարեգործական Ինկերությունից, իսկ մյուս յերկուսը՝ Բելգիայի Համալսարանական Ինկերությունից:

Այդպիսով այդ կոմիտեյի մեջ մտնում են հետեւյալ անձինք՝ կոմսուհի դ'Արզո Շոռնհովին (Նուպար Փաշայի աղջկեր) հիմնադիրի կողմից:

Համալսարանական: Ծնկերության կողմից՝ Ժյուլ Դեսըր (Լիեժի Համալսարանի պրոֆեսոր) և Լեոն Լեկեդ (Բրյուսելի համալսարանի պրոֆեսոր):

Վահան Մալեզյան և Մաքսուդ Միհրանյան՝ Բարեգործականի կողմից:

Այդ կոմիտեն արդեն թոշակավորում է 9 հոգու.

1) Պաղտիկյան Պատրիկ—Ինժ. մեխանիկ,

2) Պարթեվյան Արա—Յերաժշտական կոմպոզիտոր, սովորում է՝ Փարիզի կոնսերվատորիայիում,

3) Պողոսյան Վլույր—Ինժ. մեխանիկ, Միտավայդայի տեխնիկումում,

4) Գոյունյան Գեվորգ—Ֆիլեատուրի և տեսաժի ու-

սահնող, վերվելի բարձրագույն ակքստիլ ուսումնարանում,

5) Մակարյան Տիրան—Երևան, ելեքտրիկ, Ցվիկառի ինժ. դպրոցում,

6) Պահավունի Եղվարդ—Քիմիկոս, Բըյուսելի գիտությունների համալսարանում,

7) Ջրբաշյան Տիգրան—Հանրաբանություն և Պալեոնտոլոգիա, Սորբոնում,

8) Զարգարյան Գրիգոր—Մաթեմաթիկա՝ Բերլինի համալսարանում,

9) Թերզյան Արտաշես:

Սրանցից Ջրբաշյանն արդեն ավարտել է և գտնվում է Հայաստանում: Պողոսյան Վրույրը՝ կրկին ավարտել է և աշխատում է Փարիզի Սիտրոյան ավտոմոբիլի գործարանում, իսկ Թերմանիստիայում սովորող Մակարյանը, Թերզյանը և Զարգարյանը ավարտեցին տնօցյալ գարնանը և մեկնում են Հայաստան:

1924 թվին, Նուպար Փաշան Կոմիտեյի հիմնադրամի վրա ավելացրեց ևս 12.500 ռուբլու Հայաստանի գյուղատնտեսական բանկի արժեթղթերը, վորոնց տոկոսները կրկին հատկացրեց ուսանողներին, այս անգամ դրանց ընտրությունը թողնելով Հայաստանի Պետական համալսարանին՝ իր շրջանավարտների միջից կատարելու:

Այս կրկնակի ձեռնարկների մասին Կոմիտեն 1925 թ. մայիսի 19-ին, մի գրությամբ, հաղորդել է Խ. Հայաստանի Լուսժողկոմատին և Հայաստանի Պետական համալսարանին՝ դիտություն:

29. ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՖՈՆԴ

Խրիմյան Հայրիկի մահից հետո, Ամերիկայի մեջ, Վանեցիների շրջանում միտք և հղանում հանգանակություն կատարել և վասպուրականում մի վորեւ ձեռնարկով հավերժացնել նրա հիշատակը:

Հանգանակությունից դոյանում եւ մոտ 10.000 դոլար, վոր մինչեւ որս մնում եւ անգործադրիր:

Խրիմյան Հայրիկի ֆոնդի խնամակալության կողմից Հայ Կրթական Հիմնարկության Քարտո դ ուլը՝ S. Տիբիճյանը 1926 թ. հոկտ. 5-ին, գրում եւ Հ/Կ-ի և Կ. Խաչի պատվիրտակության հետեւալ նամակը.

«Խւրախ եմ Ձեզի հաղորդելու, թե Խրիմյան Հայրիկի ֆոնդի մասին Ձեր ըրած թելազրությունը նպատակահարմար թվեցավ Վարչությանս:

Ցեվ ուստի խնդրեմ բարի ըլլաք առաջին պատեհությամբ զրել մեզի, թե Հայրիկի ֆոնդով (10.000 դոլարով) ի՞նչ տեսակ դպրոցի շենք մը կարելի յեւ շինել գյուղատնտեսական կամ մեղվարուծական նպատակի համար, ու բ կխորհիք իբր հարմարագույն վայր, և թե կարէ լի չե՞ արդյոք ունենալ այդպիսի շենքի մը հատակադիմը, Վարչությանս վերջնական նկատառության համար»:

30. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տաճկահայաստանից և Փոքր-Ասիայից արտասահման և մասնավորապես Ամերիկա մեկնած գաղթականն երբ տարիների ընթացքում հիմնել են «Կրթասիրաց», «Վերաշնուց», «Հառաջաղիմական» ածականներով բազմաթիվ

Հայրենական Միությունների իրենց ծննդավայրերին կըրթական և տնտեսական աջակցություն ցույց տալու համար:

Համաշխարհային պատերազմից հետո, յերբ վոչչաշացան այդ Միությունների գրգապատճառ յեղող գյուղերն ու քաղաքները, կամ նրանց հայ ազգաքնակությունը, կտրված յերկրից, ոտարության մեջ մնացին միայն համանուն ընկերությունները, իրենց վարչությունով, նախագահով, գանձապահով, հաճախ և բավական խոշոր դրամագլխով:

Յերբ վերջին ժամանակներս որտասահման հասավ ի. Հայաստանի շինարարության և նրա վերածնողի կոչը, Հայրենակցական Միությունները, իրեն գավառացիների հիմնարկություններ, և իրենց սոցիալական կազմով գերազանցապես աշխատավորական բնույթ կրող, ցանկացան վերածնվող հայրենիքի մեջ հավերժացնել իրենց ծննդավայրերի անունները, կառուցանելով քաղաք, գյուղ կամ սոսկ շենք:

Առաջին քայլն այդ ուղղությամբ արագ Արարկիրցիների Հայրենակցական Միությունը՝ Նա 1925 թվին Քանաքեռի տակը, Յերեանի մոտ, վերցրեց հատուկ հոգամաս և սկսեց շինել մի քաղաք, «Նոր-Արարկիր» անունով:

Որինակը յեղավ վարակիչ և այսոր, համարյա թե բոլոր Հայրենակցական Միությունները վորոնում են նույն ծրագիրը:

Այսպես՝ վերջերս, ՀՈԿ ի և Կ. Խաչի պատվիրակության ներկայությամբ նման վորոշում հանեց Մալաթիայի Հայրենակցական Միությունը Ամերիկայի Ռևսոր քաղաքի մեջ գումարած իր պատգամավորական ժողովում, քվեարկելով՝ Նոր-Մալաթիայի համար Հայո սահմանում գործադրություն՝ 30.000 դրամ:

Իսկ արդպեսի Հայրենակց ոկան Միությունների թիվը միայն Ամերիկայում 100-ից անց է:

Դժբախտաբար մանրամասն և ճշտգրիտ ցանկ գոյություն չունի։ Սակայն «Ամերիկահայ Տարեգրքից» և ՀՈԿ-ի կ. Խաչի պատվիրակության քաղած տեղեկությունների համաձայն ցուցակագրված եւ 62 ընկերություն։

Գաղափար տալու համար դրանց հարստության մասին, բերենք հետեւյալ ցուցակը։—

ՀԱՅԲՆԵԱԿՑՈՒԹԵՆ ՄԻԱԽԹՑՈՒՆԵՐԻ ԱՄԵՐԻԿԱՑՈՒՄ

Պատրաստի

զբաժ

գոլարներով

կալված

գոլարներով

| | | |
|-----|---------------------------------------|---|
| 1. | Այնթաղի Ռւսութնասիր. Միութ. 1.000 | — |
| 2. | Արարկիրցին. Հայր. Միություն 60.000 | — |
| 3. | Բալլի Հավավի Ռւսութն. Ընկ. — 5.000 | |
| 4. | » Ներխ դյուզի Ռւս. Վերաշ. Մ. — 4.000 | |
| 5. | » Սաքրաթ » Ընկըրութ. 2.500 6.500 | |
| 6. | Բաղաքի Վերաշ. Միություն 5.000 | — |
| 7. | Բաղեշի Խուլթիկ դյուզի Ռւս. Ըն. 750 | — |
| 8. | Յեկեզյաց Միություն (Յերզնկա) 3.000 | — |
| 9. | Յողկատի Զաքմար դյուզի Վեր. Մ. 200 | — |
| 10. | Խարբերթի Կրթ. հեղասատ. Միաց. Ը. 5.000 | կալված, զոր բերում ե առարկան 780 դոլ. յեկամուտ: |
| 11. | Բաղմաշենի Ռւսութն. Ընկերութ. 12.000 | — |
| 12. | Դատիմի Լուսավորչ. Ռւսութն. Ընկ. 5.000 | — |
| 13. | Յեղեղի դյուզի Վերաշին. Ընկեր. 7.000 | — |
| 14. | Հյուսեյնիկի Վերաշ. Ընկերութ. 2.000 | — |
| 15. | Հողեյի Լուս. Ռւսութն. Միություն 3.000 | — |
| 16. | Մեղրեյի Կենատ. Վարժ-ի Միութ. 2.500 | — |
| 17. | Փերչենձ (Խարբերթի) գ. Ռւս. Ընկ. 5.228 | — |
| 18. | » » » » — | ԵԼՏՔ և 3 խանութ յերկը մեջ. |
| 19. | Կարնո Ռւսութն. Ընկերություն 750 | — |
| 20. | Կյուրինի Հայրենակց. Միություն 3.151 | — |
| 21. | Հեֆքարեյի աղջ. Վարժ. Կրթ. Մ. 2.000 | — |
| 22. | Եղերեկի Մեսրոպ. Վարժ. Ռւս. Մ. 10,000 | — |
| 23. | Թոփաղայի Աղքատախնամ Ընկ. 3.000 | — |

| | | | | | |
|-----|---|--------------|--------|-----------------------|---------------|
| 24. | Ֆենեսելի Ռուբինյան Ուս. | Միութ. | 7.000 | | |
| 25. | Մալաթիո Կրթասիլ. | Ընկերութ. | — | 103.000 գհու., վարչոց | 25.000 պարուղ |
| 26. | Մանիսյի Կարոտ. | Ոգնող Միութ. | 440 | — | |
| 27. | Մարաշի Հայրենասիրաց | Միութ. | 1.500 | — | |
| 28. | Շապին Քարահ. «Ռազմիկ» Հայր. Մ. | | 175 | — | |
| 29. | » » և Գյուղորելից » » | | 60 | — | |
| 30. | Զմշկածաղի Ընդհան. | Միություն | 1.500 | — | |
| 31. | Սերաստիո Վերաշ. | Միություն | 3.059 | 1.500 (գործեր) | |
| 32. | Սերաստիո Քոլն դ. | ս.-Մեսր. Դպ. | — | | |
| 33. | Վասպուրականի Աւոռումն. | Միութ. | — | | |
| 34. | Վանի Ծովաստան գ. | Ուս. | Միութ. | 2.500 | — |
| 35. | » Շահ-Բաղի Գյուղի Ուս. | Միութ. | 2.000 | — | |
| 36. | Տիգրանակերպի Հայրեն. | Միութ. | 10.590 | — | |
| 37. | Զերմուկի Հայրենակց. | Միություն | 2.156 | — | |
| 38. | Տիգրիկի Աշուշենի Հառաջ. | Միութ. | — | | |
| 39. | Արամթաղի Կարոտ. | Ոգն. | Միութ. | 1.500 | — |
| 40. | Բարաղամ Գյուղի Աւոռումն. | Միութ. | 1.300 | — | |
| 41. | Հաղթ Գյուղի Վերաշին. | Միութ. | 8.000 | — | |
| 42. | Քեսրիկի Ցերկենո Աւոռումն. | Ընկ. | — | | |
| 43. | Հաջնի Հայրենակցական Միութ. | 3.000 | — | | |
| 44. | Քղիկի Հրշանի Գյուղերի Հայրենակցական Միություն Երը | — | | | |
| 45. | Դարմանի » » | » | | | |
| 46. | Շերմակի Աւոռումնաս. | Միություն | — | | |
| 47. | Զանախչիկի » » | » | | | |
| 48. | Սակաձորի Վերաշնաց | » | | | |
| 49. | Սերգեվիլի | » | » | | |
| 50. | Հարինձի | » | » | | |
| 51. | Դարաբելի | » | » | | |
| 52. | Հերդիֆի | » | » | | |
| 53. | Խուզի | » | » | | |
| 54. | Հարեղի | » | » | | |
| 55. | Հարստանի | » | » | | |
| 56. | Աստղաբերդի | » | » | | |
| 57. | Քարավուղի | » | » | | |

| | | |
|--|---|---------|
| 58. Արորի | յ | յ |
| 59. Ագրակի | յ | յ |
| 60. Խոմնակի | յ | յ |
| 61. Չանի | յ | յ |
| 62. Քղի քաղաքի | յ | յ |
| Քղիի շրջանի այս բոլոր Հայրենասիրական Միությունները ունեն զանազան բանկերում պատ- | | |
| րաստի դրամ | | 80.000 |
| Ընդհանուր գումար մոտավորապես | | 360.000 |

Այսպիսով այս ցուցակագրված Միությունները իրենց տրամադրության տակ ունեն մոտավորապես 700.000 ըուրլի դրամագլուխ:

Հայրենակցական Միությունների կարևորությունը մեծանում է նրանով, վոր նրանք ունեն միջոցների հայժաման պոտենցյալ հնարավորություններ: Վորեւ ձեռնարկություն, վոր սկսվում է Հարենակցական Միությունների կողմից և նրա նպատակների համար, սովորաբար պսակվում է հաջողությամբ:

Նրանց մեջ սկսված շարժումը, լծակից լինել Խ. Հայստանի շինարարության գործին, անկասկած մեծ է:

Մինչ դեռ, մեծատունների կազմակերպությունները, հազար չափում են, մեկ չկտրելու համար, Հայրենակցական Միությունները, իրեւ ժողովրդի ծոցից յելած կազմակերպություններ, մեկ չափում են, տասը կտրում, չխնայելով իրենց, համեմատաբար, համեստ միջոցները իրենց հայրենիքի շինարարական մեծ գործի համար:

Ապացույց դրան՝ Նոր-Արարկիրը, Նոր-Մալաթյան,
Նոր-Բութանյան:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Մենք այստեղ թվեցինք հասարակական այն կազմակերպությունները, վորոնք աշխատելով արտասահմանում, իրենց տրամադրության տակ ունեն քիչ թե շատ շոշափելի դրամագլուխներ և կարող են, կամ ցանկանում են, ոգտակար լինել Խոր. Հայաստանի շինարարական աշխատանքներին:

Սակայն, չմոռանանք, վոր այս շարքի մեջ մենք չը հիշատակեցինք այն կազմակերպությունները, վորոնց աշխատանքը չե ընթանում հասարակական-բարեգործական դրոշական դրոշակի տակ:

Այսպես, մենք այստեղ կանգ չտռանք այն գումարների ու ֆոնդերի վրա, վորոնք պատկանել են կամ պատկանում են քաղաքական կազմակերպություններին: Մենք լոռությամբ անցանք այն խոշոր հանգանակությունների կողքից, վորոնք կատարվել են նույն քաղաքական կուսակցությունների նախաձեռնությամբ, ինչպես որինակ «Բանակի», «Փրկության», «Կիլիկիայի» և այն հանգանակություններն, իրենց միլիոնավոր բուրլիների արդյունքով: Այդ գումարների, ինչպես և նրանց գործադրության հանգամանքների վրա, մենք չծանրացանք, համարելով մեր առաջադրած նյութի ըջանակից զուրս:

Նույն պատճառաբանությամբ մենք չուղեցինք կանգ առնել նաև կրոնական հաստատությունների վրա, վորոնք

պակաս հարստությունների տեր չեն, ինչպես որինակ Միհթարյան զույգ Միաբանությունները:

Զուտ հասարակական կազմակերպությունների թվում մենք չիշտակեցինք նաև այն ընկերությունների անունները, վորոնք, չնայած, իրենց տարեկան հասույթներով ու զանազան նպատակների համար զործադրած գումարներով բավականին պատկառելի մեծություն են կազմում, սակայն չունեն մնայուն կամ անձնումիւնելի գումարներ:

Վերջինների մեջ, իր կազմակերպչական ցանցի մեծությամբ առաջին տեղն ե բոնում Հայաստանի Ոգնության կոմիտեն, վոր կարճ ժամանակի ընթացքում Ամերիկայի և Յեվրոպայի մեջ 80-ի չափ մասնաճյուղեր ունեցավ:

Նույն յերիտասարդ կազմակերպության թվին և պատկանում և Հայաստանի Պետական կարմիր Խաչը, իր 60-ից ավելի մասնաճյուղերով:

Այս յերկու կազմակերպություններն իրենց վողջ հասույթներն ուղարկում են անմիջապես Խոր. Հայաստան:

Այնուհետև կան բարեգործական բնույթ կրող բազմաթիվ այլ ընկերություններ, վորոնք տարիներ շարունակ աշխատում են արտասահման, և յերբեմն Խոր. Հայաստանի մեջ գործադրելու համար զանազան հատկացներ են անում:

Դրանց թվին են պատկանում՝ Փարիզի Հայ Տիկնաց Միությունը, Լոնդոնի Տիկնաց և Միացյալ Բնկերությունները, Բրյուսելի Հայ Տիկնաց Միությունը և այլն:

Այս ե ահա, մոտավորապես, համառոտ պատմությունը ժողովրդական այն հարստությունների, վոր զությունը ունեն արտասահմանում:

Ծնթերցողն, անկասկած, նկատեց, վոր զրանց մեծագույն մասը չի գործադրվում: Մնալով ոտարյերկյա բան-

կերում, նրանք շահ են բերում միայն տեղական բանկերին, նպաստում այդ յերկըների առանց այն ել բարձր տնտեսական վիճակի բարգավաճմանը և խթան դառնում նրանց արդյունաբերության ու առևտրի վերելքին:

Իսկ այն ժողովուրդը, վորի համար հատկացրված են այդ գումարներն, այն յերկիրը, վորի անունը լսելիս արտասուք են թափում կտակակատարներն ու նվիրատուները, մնում ե մոռացության շլաքի ատկ իբրև ժառանգությունից կողոպտված մի անկարող վորբ:

Մենք, իբրև Հայաստանի հասարակական կազմակերպությունների կողմից առաքված պատվիրակություն, սկսած Արարատից մինչև Խաղաղական Ովկյանոսի հեռավոր ափերը, Յերևանից մինչև Սան-Ֆրանցիսկո, ականատես յեղանք, թե Խորհրդային Հայաստանի շինարարությունը և նրա վերածունդը ինչպիսի խանդավառություն ելին առաջ բերում ժողովրդական լայն խավերում:

Ցեղե արդարեւ լուրջ են այդ զգացումներն, յեթե դրանք թեթև ըումանտիզմի անցողակի պորտքումներ չեն լոկ, ապա անհրաժեշտ ե խոսքից գործի անցնել: Ճառերով ու ծափերով յերկիր չի շինվում: Քաղաքացիական պարտքն ու պատմական իմաստությունը պահանջում է, վոր մի ժողովրդի բաղտով հետաքրքրողներն որ առաջ շարժման մեջ դնեն նրա բարգավաճումն ու ապագա յերշանկությունը նախապատրաստող բոլոր ոեսուրմները, այդ ժողովրդին պատկանող բոլոր անժխտելի հարստությունները:

Այդ տեսակետից խոշոր գեր ունի խաղալու հասարակական կազմակերպված կարծիքը, վորի հստակ և կը բուկ արտահայտությանը նպաստելու համար հրատարակում ենք սույն գրքույկը:

ՍԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | | |
|-----------------------------|------------------|----------------------|
| Ամերիկան դուարի արժեքը | 1914 թվին — 1 լ. | 94 կու. |
| » | » | » 1927 » — 1 լ. 94 » |
| Անգլիական ֆունտ ստեղծնողը | 1914 թ. — 9 լ. | 45 » |
| » | » | 1927 թ. — 9 լ. 47 » |
| Ֆրանսիական ֆրանկը՝ | 1914 թ. — | 37,5 կ. |
| » | » 1920 թ. — | 12,4 » |
| » | » 1921 թ. — | 12,5 » |
| » | » 1922 թ. — | 15,3 » |
| » | » 1923 թ. — | 11,4 » |
| » | » 1924 թ. — | 10,6 » |
| » | » 1925 թ. — | 10,5 » |
| » | » 1926 թ. — | 5,9 » |
| » | » 1927 թ. — | 7,6 » |
| Ֆրանսիական վուեխին (լիրան)՝ | 1914 թ. — 9 լ. | 60 » |
| » | » 1927 թ. — 9 լ. | 60 » |
| Իտալական լիրան՝ | 1914 թ. — | 37,5 » |
| » | » 1920 թ. — | 7,3 » |
| » | » 1927 թ. — | 11,0 » |
| Տաճկական լիրան՝ | 1914 թ. — 8 լ. | 54 » |
| » | » 1927 թ. — 1 լ. | |

Հեկտարը հազարը կ. — 0,915 գեպատինի
 Հեկտոնվարը » — 8,1305 դույլի
 Տաճկ. ոխան. » — 3 դ. 7 մայսալի

Յ Ա Ն Կ

Ցերես

Հայ ժողովրդական հարստությունները Ար-
տասահմանում 3

Ա Կ Տ Ա Կ Ն Ե Բ

| | | |
|-----|--|----|
| 1. | Ամսասարյանի կտակը | 5 |
| 2. | Ռափայել Մարկոսյանի կտակը | 8 |
| 3. | Մատթեոս Խերյանի կտակը | 14 |
| 4. | Կյուլապի Կյուլպենկյանի կտակը | 18 |
| 5. | Ցերվանդ Հակոբյանի կտակն ու նվերը | 21 |
| 6. | Դարուհի Հակոբյանի ֆոնդը | 25 |
| 7. | Դր. Մեռնտեմեայանի կտակը | 26 |
| 8. | Ավետ Սարգսի ֆոնդը | 27 |
| 9. | Զոն Արշակունու կտակը | 27 |
| 10. | Զատիկ Խանզատյանի նվերն ու կտակը | 28 |
| 11. | Մկրտիչ Հովհաննիսյանի կտակը | 29 |
| 12. | Սիմոն-Գարեգին Փաշաքարյանի կտակը | 30 |
| 13. | Եկնայանի կտակը | 30 |
| 14. | Անանուն կտակ գրադարանի համար | 31 |
| 15. | Սեղբակ Գլըճյանի կտակը | 32 |
| 16. | Բարեգործականին հանձնված կտակները | 33 |
| 17. | Զանազան կտակներ | 34 |

Բ. ՆՎԻՇՐԱՑՎԱՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | | |
|-----|--|----|
| 18. | ՄԵԼՔՈՒՅՅԱՆ ՆՎԻԲԱՏՎՈՒԹՅՈՒՆ | 36 |
| 19. | ՄԱՐԻ ՆՈւպարի անվան հաստատություն | 42 |
| 20. | Գալուստ Կյուլպեհնկյանի նվիրատվությունը | 46 |
| 21. | ԲՈՅԱՋՅԱՆ ՆՎԻԲԱՏՎՈՒԹՅՈՒՆ | 46 |

Գ. ՀԱՍՏԱՐԱԿԵԼԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | | |
|-----|---|----|
| 22. | ՀԱՅԼ. ԲԻՆԳԻ. ԲԱՐԵԳՈՐԾ ՄԻՈՒԹՅՈՒՆ | 49 |
| 23. | ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻմնարկություն | 52 |
| 24. | ԴԱՐԱՊԱՏԻՐ Տիկնաց Ընկերություն | 55 |
| 25. | Տիգրան Կամսարականի Գրական Մրցանակը . . | 56 |
| 26. | ՅԵՐՎԱՆԴ Աղաթօնի Մրցանակը | 57 |
| 27. | Գարակյողյան Հոմ | 58 |
| 28. | ՀԱՅ ԹՈՂԱԿԱՊՈՒՆԵՐԻ Կոմիտե | 60 |
| 29. | ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԼԻ ՓՈՆԴ | 62 |
| 30. | ՀԱՅՐԵՆԱԿԱԼԳԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 62 |
| | ԴԵՐՁԱԲԱՆ | 67 |
| | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 70 |

— ԳԻՒԲ 1 թ. —

Издание Комитета Помощи
Армении

